


Hentchak :
Organe Central
DU PARTI
HENTCHAKISTE.

Հ Ն Չ Ա Կ

Journal Arménien
mensuel
XVIII Année

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ն Ե Ց Ի Օ Ն Ե Լ Ի Չ Մ Ը ԿՈՎԿԵՍՈՒՄ



Արդէն դարձել է անհրաժեշտ ճշմարտութիւն, որ երկչոտ Նիկիոյի կառավարութիւնը ձգնու՞մ է, վայրենի կամ խարդախ, բռնի կամ խաբէբայ միջոցներով, միմեանց դէմ լարել, միմեանց թշնամացնել, միմեանց կոտորել տալ այլ և այլ ազգերին Ռուսաստանում և այդպիսով փորձել յազթանակել Յեղափոխութեան լայնածաւալ հոսանքը և անվրէպ հարւածները: Կառավարութեան այդ քաղաքականութիւնը մասնաւոր ասպարէզ է գտել մեզանում, Աովկասում: Բայց նոր է այն երևոյթը, որ կառավարութիւնը ջանալով մինչև այժմ թաքցնել իր այդ նենգամիտ քաղաքականութիւնը, այսօր այլ ևս այդ էլ աւելորդ շքեղութիւն է համարում և ցինիկարար պատճառարանում է, թէ պէտք է դիմել «ամեն միջոցների» տէրութեան խաղաղութիւնը պահպանելու համար խռովարար ժողովրդների ըմբոստ ոտնձգութիւններից»: Այդ տրամաբանութեամբ դուրս է գալիս, որ պարսկի ձեռքով կոտորել տալ հայերին և խաւարամիտ ռուս ամբոխի ձեռքով՝ հրեաներին նշանակում է «տէրութեան խաղաղութիւնը պահպանել»: Այդ տրամաբանութիւնն իր արգումէնաներով ապացոյց է, որ ցարի կառավարութիւնն այլ ևս գոյութիւն ունի միայն առերևոյթս, որ խաղաղութիւնը պահպանելու համար նա այլ ևս իրան անկարող է գտնուի, և ազգերին գրգռելով միմեանց դէմ, ուզում է դրանց ոսկրներէ կուտակել բուրդեր ու լեռներ, որոնց վրայ, ի հարկէ, խաղաղութիւնը ցած կիծնէ և ցարմիապեան էլ, բուր նման, կը թագաւորէ:

Բայց որքան էլ ցինիկական խոստովանու-

թիւն լինի այդ «ամեն միջոցների» ոճրային արգումէնար, դրա մեջ թաքնւած կայ նոյն քաղաքականութեան մէկ այլ կողմը, որը, թէկուզ ցոյց էլ տալիս լինի ցարիզմի սնանկութիւնը, այնուամենայնիւ հաշւած է այլ և այլ ազգերի բուրժուազիայի, տիրող դասակարգերի երկչոտութեան վրայ: Արդարև, արդեօք այդ ոճրային արգումէնար մի միջոց չէ կառավարութեան կողմից երկեղով պաշարելու Աովկասեան ազգերի ազնւական ու բուրժուա դասակարգերը, որպէս և դրանց ներկայացուցիչ ինտելիգենցիան, այլ և ժողովրդային խաւար խաւերն անգամ! Յարկումի համար առաջնակարգ վտանգ է ազգերի համերաշխութիւնն ու համագործակցութիւնը, լինի յեղափոխական, լինի նոյն իսկ լոկ դիմադրական կերպարանքի տակ: Ամենքին այսօր պարզ է, որ ցարիզմը ձգնում է կտրել այդ կապը և ազգային կռիւների լաբիրինթոս ստեղծել այդ ազգերի կեանքից: Նայենք խնդրին աւելի մօտից և կը տեսնենք, որ ցարիզմն արդէն քողում է իր ցանած սերմերից հասած պտուղները:

Մասնաւորելով մեր խօսքը Աովկասի մասին, մենք տեսնում ենք, որ այդ երկրում ապրող ազգերի ազնւական ու բուրժուա դասակարգերը, իրանք չը լինելով յեղափոխական, դէպքերի շնորհով հարկադրւած ընկել են դիմադրական հողի վրայ ընդդէմ կառավարութեան, այդ հողն ըստ ինքեան լինելով նրանց դասակարգային սնտեսական ու քաղաքական շահերի հողը: Նոյնպէս յեղափոխական դէպքերի շնորհով, որոնց նախաձեռնողն ու գործադրողը ղխաւորապէս պրօլէտարիատն է և առհասարակ աշխատաւոր ժողովուրդը, վերոյիշած բուրժուական դասակարգերը դարձեալ հարկադրւեցան ակամայից իրանց դիմադրականութեամբ թեքել աւելի դէմօկրատիզմի կողմը: Արովհետև մի կողմից սարսափելով ժողովրդային ճահճից,

Թիւնների, որոնք իրանց յետադիմական գործն ու գերը Թաքցնում են «յեղափոխական», այլ և «սօցիալիստ-յեղափոխական» է ա ի ի է ա ն ե թ ու փափախների տակ:

Մեր այդ նացիօնալիստ «գործիչների» առիթով ահա թէ ինչ ենք կարգում մի Աովկասեան յօդաճում գետեղաճ Ուուսաստանի Ս. Գ. Բ. Ա. Թեան «Սօցիալ-դէմօկրատ» բանուորական Թեթի Թիւ 8ի մէջ.---

«Ո՛չ Թիւրք, ո՛չ հայ գործիչները չեն փորձում դուրս գալ իրանց նացիօնալիստական բոյնից և երկու ձեռքով ժողովրդին էլ հանել կրոււի ընդհանուր հողի վրայ: Այս միայն մէկ ուղի այդպիսի ազգային միացման. դա սօցիալդէմօկրատական ուղին է: Միայն սօցիալ դէմօկրատական դրօշն է յայտնուում միջազգային դրօշ և զրա հեռուորներն ազգային խզումն չեն ծանաչում. . . .»

Յօդաճագիրն այն կարծիքն է յայտնում, որ հայ նացիօնալիստական կուսակցութիւնները — «այնքան սահմանափակել են հայ դիւզացիների գիտակցութիւնը, որ սրանք ո՛չ մի մասնակցութիւն չունեն ընդհանուր յեղափոխական շարժման մէջ: Այդ ազգային էգօիզմը (ինքնասիրութիւնը) — հարազատ զուակն է ազգային բուրժուազիաի, և որովհետեւ հայ նացիօնալիստներն էլ մեծ մասամբ այդ դասակարգից են, ուրեմն էլ ինչ լաւ բան կարելի է սպասել նրանցից հայ դիւզացիների ու բանուորների համար»: Այս ապա ամփոփելով իր խօսքը «Սօցիալդէմօկրատան» ասում է. — «Մի խօսքով Անգլիոյի փրկիկասի մեծ մասն այսօր կատարում է ոչ թէ յեղափոխական, այլ յետադիմական դեր: Այդ հայ ու Թիւրքի խզումն ու սրուակտոււրը զօրացնում է միապետութեան ոյժը և տկարացնում սօցիալդէմօկրատիան: Գա — մեր երկրի ամենաճանր ինդիւս է և զրա վրայ դարձնում ենք մեր ընկերների ուշադրութիւնը: Մինչև որ Թիւրք ու հայ դիւզացիներն ու բանուորները չը միանան Աովկասեան սօցիալդէմօկրատիան, ո՛չ մի վախճան չեն զանիլ ազգային ընդհարումները և սօցիալդէմօկրատիան չէ կարող յաղթանակել: Այդ ցաւի հետ ոչինչ չեն կարող անել նացիօնալիստները, որովհետեւ այդ ցաւն ինքը ծնունդ է հէնց նացիօնալիզմի: Միայն սօցիալդէմօկրատիան է կարող հաշտեցնել և միացնել ամեն

ազգերի բանուոր ժողովրդին, բայց հէնց այդ բանի դէմ են գործում նացիօնալիստները. . . .»

Այս նացիօնալիստները պահանջում են իրաւունքներ իրանց համար, հայ նացիօնալիստներն՝ իրանց համար, կարծես թէ այդ ամենքն ապրում լինեն առանձին-առանձին կեանքով, բաժան միմեանցից և միւսներից, կարծես թէ այդ ամենքն էլ աէր են առանձին ազգային տէրիտօրիտաների, աշխարհագրական սահմանների: Նրանք չեն կարողացել հասկանալ, որ Աովկասում բոլոր ժողովրդները պէտք է առաջ դրնան ձեռք ձեռքի տաճ, պէտք է կուեն միւսնոյն ընդհանուր պահանջների համար և ապրեն համերաշխ կերպով: Իրանց բակից դէն նրանք ոչինչ չեն ուզում տեսնել և հէնց դրանով հող են պատրաստում ամեն տեսակ ազգային խզման ու կուլի. . . .»

Այդպէս են մտածում Աովկասեան սօցիալ դէմօկրատիան պատկանող մեր ընկերները, և մենք նոյնքան մեծ հաճութեամբ ենք այդ տողերով ամփոփում մեր յօդաճը, որքան դա Թարգման է հէնց մեր հայեացքի, որ քանիցս սոսիթ ենք ունեցել արտայայտելու շնչակեան մամուլում:

Եւ ուզում ենք մեր խօսքն աւարտել նոյն «Սօցիալդէմօկրատիա»ի յօդաճի հետեւեալ վերջաբանով. — «Սօցիալդէմօկրատիաի գործն է, մանաւանդ մեզանում՝ Աովկասում, անդադար կրուել նացիօնալիզմի դէմ և ոչնչացնել նրան արմատից:»

Այս, կուել նացիօնալիզմի դէմ, կուել նրա ամեն զոյնի ու տեսակի արտայայտութեան դէմ, կուել յանուն ազգերի համերաշխութեան և հասամագործակցութեան՝ ցարիզմի սապալման նրպատակով, կուել յանուն ժողովրդի, սրբօխարիատի և սօցիալիզմի!

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱՍԱԿ ԹԻՒՐԿԱՑ-ՎԱՅԱՍՏԱՆԻՑ

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ, Ապրիլ 30 1905

Թուրք բարբարոս կառավարութեան անտանելի լուծին տակ ճակատագրականօրէն հեծեճող հայ ժողովուրդն օրհասական վիճակի մէջ է այլ ևս չայուածիւնը, ամէն տեսակէաներով հեղհեաէ վատ-

Թաղացուծի կ'երթարկուծ թուրքիոյ մէջ, շնորհիւ Տա-
 ձիկ տէրութեան կերպքիչ քաղաքականութեան: Կոր
 ծնող ամէն օր նոր փորձանք մը երեան կը բելէ
 իր հետ՝ հէք հայուն գլխուն: Կառավարութեան ան-
 լուր հարստահարութիւններուն և ժողովուրդը փճա-
 ցնող դրութեան պակասը, — եթէ պակաս կը մնայ
 սակայն, — կը ջանայ լրացնել համարի հաւատարիմ
 իսլամ ժողովուրդը՝ իր «գեցութեան շրջանակին մէջ
 անմիջական կերպով և կամ պատահաբար ինող ա-
 մէն հայի համար, աւանց խտրութեան: Իրողութիւն
 մէջ այսօր անժխտելի՝ թէ թուրքիան դէպի անկում
 կը դիմէ հսկայ քայլերով, իր հետ տանելով այն
 բոլոր սարքերը՝ որոնք թուրքիոյ հողին մէջ ծնած ը-
 լալու դժբաղդութիւնն են ունեցեր և այժմ ալ հոն
 ապրելու դատապարտութեան մէջ կը գտնուին: Խեղճ
 հայ ժողովուրդը տարիներէ՝ աստին միշտ կուրծք տը-
 ուաւ ամէն զրկանքներու, անարգարութիւններու, կե-
 ղեքումներու և չարաշահութիւններու, բայց այսօր
 այլ ևս անկարող է դէմ կանգնելու նիւթական կա-
 րօտին, որին մէջ ամենէն մեծ դերը կը խաղայ հա-
 ցի մը ճամբայ գէթ ճարելու խնդիրը: Կեանքի հա-
 ճոյքն ու ապրելու վայելքը երազային բաներ են ճըն-
 շուած հայ ազգին համար, քանի որ նա առիթը չէ
 ունեցեր ճաշակելու կեանքի քեղցրութիւնները: Հայ
 երիտասարդը կոտորածէ, սրիւնէ, սարսափէ ու տան-
 ջտիքէ զատ ուրիշ բան չէ տեսեր կեանքին մէջ, որ գէթ
 պահ մը իբր յիշատակ պահէ իր տանջալից կեանքին
 երբեմնի օրերուն մէջ: Հայ պատանեկան նոր սե-
 րունդը արհաւիրքներու երկունքներովը ծնած՝ ուրիշ
 բան չէ լսած, բայց եթէ Խուր արձագանգուածը խառ-
 նաշփոթ թոճ ու բոճի մը հեկեկուտ կանչուրտուր
 ներուն, որոնք իր սրտին մէջ գամեր են արիւնի ե-
 րակները: Հայուն հին բոպէ մը իսկ իր աչքին ու երե-
 ւակայութեան չի կրնար հեռացնել իր պատիւին պը-
 սակը, զոր կրնայ քիչ մը վերջը խել ու և է թուրք
 մը: Սկիզբէն ի վեր հայ շինականը, եղին, արօրին ու
 մաճին ետեւէն քրտինք է թափեր յորդաւատօրէն ու
 ուղեւ համար հողերը, որպէսզի անոնք յագուրդ
 տան արիւնկակ թուրքին ու քիւրտին անկշտուն և
 և ծակաչք որկորին: Մահուան ու կոտորածի, արիւնի
 ու սրածութեան սև գաղափարը կը պտուտքի միշտ հա-
 յաստանի գաւառներուն ու գիւղերուն վրայ, ու տա-
 սը տարիէն ի վեր հայը չը կրնար երբէք մաներկորդ
 մ'իսկ իր սրտէն ու մտքէն մէկ կողմ՝ շուռ տալ այդ
 պակուցիչ խրտուիլակը: Թափած արիւնները դեռ չը
 ցամբած, ազատութեան ճամբուն վրայ, նահատակու-
 թեան դիւցազնութիւնով Փշացող կենսահեղուկներու
 կարմիր հետքերը դեռ չեն կարողացած անհետացնել
 հայ-հողին, թուրք բռնակալութեան հայկական կալ-
 ուածներուն մէջէն՝ ամբողջ տասնեակ մը տարիներու
 ձիւները, անձրևներն ու արևները: Ու այդ հողերը
 ա՛հ, միշտ և հիմակ՝ արիւն կը հոտին. Արհաւիրքը կը
 թագաւորէ ամէն կողմ. սարսափը կ'իշխէ ժողովուր-

դին սրտին, ու դահիճ Համարը, իր գաղանբարոյ
 ներկայացուցիչներուն հետ չի հեռատեսեր այն բո-
 լանդակ աւերքը, որ վաղը պիտի փութայ անշուշտ քա-
 լելու սա անիծուած կառավարութեան վրայ, ներքնա-
 պէս, բարոյապէս ու նիւթապէս փճացնելով բոլորովին
 և թուրքիան մատնելով. — բառին իսկական առումով, —
 մեռելութեան վիճակին, որուն կ'առաջնորդուի արդէն:
 Միևնոյն չարչարանքի կեանքը կ'ոնցնէ խեղճ հա-
 յը, երկարատե և համր խաշելութեան մարտիրոսային
 գալարումովը: Երկուրէն հրէջը գօրք. ստիկան, պաշ-
 տօնեայ և ժողովուրդ, իրենց ճանկերը միշտ սպառնա-
 կան՝ ցցած են հայ ժողովուրդին դիմաց, իբրև
 դամալկեան սուրբ: Ինչ ընէ ողորմելի հայը այս բար-
 բարոսութիւններուն հանդէպ: Պակաս չեն անշուշտ
 շատեր, որոնք մահը կը փնտռեն անձկագին, որպէս-
 զի անկեա ժամ առաջ ընդհատե սա՛ չարչարանքի
 պատկերը, որուն մէջ մէկ դժբաղդ գեմբերն ու դո-
 հերը կը նեկայացնեն իրենք:

Թողունք սակայն ատոնք պահ մը և դառնանք
 թարմ իրողութիւններու, որոնց մէջէն փայլուն կեր-
 պով կ'արտացոլայ Տաճիկ անխիղճ կառավարութեան
 գարշ ոգին, թուրք վայրենաբարոյ պաշտպագու գ ժո-
 ղովուրդին ստրկամիտ և վատ սրբամարտութիւնները
 հայերու մասին և պաշտօնական անձնուորութիւններու
 ալ սիրտ պատուցնող ձգտումները:

Օսմանեան կառավարութեան վեհանախարհ...
 հայաստանի մէջ ըրած բարենորոգումներէն մինն ալ
 այն եղաւ որ, տուրքերու հաւաքման գործը, որ առաջ հայ
 մխթարներու (հաւաքիչ) ձեռքով կը լլար, յանձնեց
 թուրք թահսիլտարներու, (գանձող պաշտօնեայ) որ-
 պէսզի օրը օրին, ամէն տեսակ լիտի, ստոր և ան-
 խիղճ միջոցներով կարենայ տուրքը գանձել՝ նիւթա-
 պէս բոլորովին քայքայուած հպատակ ժողովուրդներէն և
 մանաւանդ հայերէն, որոնք մահացու մեղքն էին գոր-
 ծած ինքնուրոյն և ազատ կենցաղի, գէթ կեա՛քի, պա-
 տիւի և գոյքի ապահովութեան ամենաարդար և ի-
 բաւացի դատին պաշտպան կանգնելով և կամ հա-
 մակիր հանդիսանալով: Ուրիշ ատեն գրուած է ար-
 դէն թէ այս թահսիլտարի դրութիւնը որչափ վը-
 նասեց հայուն, թէ՛ գիւղին և թէ՛ քաղաքին մէջ:
 Անոնք երբէք խղճահարութիւնն ու վարանումը չունե-
 ցան խեղճ հայու հողերը ամէնէն վար գիններով ծա-
 խելու, տանը կահ կարասները գրաւելու, վրայի լա-
 թին իսկ զեջանելու և կամ անոնց... պատիւին իսկ
 աչք տնկելու: Ժողովուրդին ունեցած ֆեսալն չափ ալ
 սակայն կառավարութիւնը ֆեսալն, վասնզի խոշոր զեղ-
 ծումներ պարարեցին միշտ այս ու այն պաշտօնեան
 որ օրինաց խտրութիւններէն ապահովարար ազատ է
 երբ երեան ելէ իր զեղծումը: Ողջ ըլլայ... դը-
 րամը, կաշառքը: Անկեա ամէն զեղծում, ամէն օրի-

նազանցութիւն կրնայ պարտկել: Ո՞վ է անաչառ-
օրէն հաշիւ փնտռողը:

Տուրքերու գանձումը այս դրութեան վերածուած
ատեն Անդրէասն ալ ունեցաւ իր թահսիլտարները,
որոնց մէջէն անուանի հայտատեաց Բէշիտ Պէյի տղան՝
Սիւլէյման էֆէնտին ալ հայերուն յատկացուած էր:
Սա հայերու վրայ ամէն տեսակ ճնշումներ, նեղու-
թիւններ, ու բռնութիւններ կատարելէ վերջ, իր պաշ-
տօնավարութեան միջոցին քանի մը հարիւր լիրա կը
խորէ ու կը գրպանէ: Թամանակ վերջը խաղը մէջ-
տեղ կ'ելնէ և կառավարութիւնը կը գիտնայ: Թուրք
կառավարութեան բարի սովորութիւնն է գործի մը
կամ դէպքի մը դեռ նոր ատենը արտասովոր ոգե-
ւորութիւն մը և փութկոտութիւն մը ցոյց տալ անոր
նկատմամբ, հոգ չէ թէ, քանի մը օր վերջ ամէն
ինչ մոռցուի: Անմիջապէս քննիչ պաշտօնեայ մը (թահ-
սիլտար միւֆէթիթիչի) հասնելով, խնդիրը կը քննէ և
Սիւլէյմանի զեղծարարութիւնը հաստատելով զայն պաշ-
տօնանկ կ'ընէ, առանց սակայն ըստ օրինի պատիժն
ալ միասին տալու: Այլ սակայն, եթէ մի' արասցէ
այդ զեղծումը գործողը հայ մը ըլլար, կրնայ երե-
ւակալուիլ թէ ինչ պատիժներ պիտի գործադրուէին
անոր վրայ իբրև խայրն (անհաւատարիմ): Սիւլէյ-
մանի և հօրը կուսակիցները որ բաւական ազդեցու-
թիւն կրնան գործել տեղական կառավարութեան վրայ,
ատոր ալ միջոցը կը գտնեն սակայն. թահսիլտար միւ-
ֆէթիթիչին նաշառքով Ալըճօրա փոխադրել կուտան՝
պաշտօնապէս, որպէսզի անոր հեռացումովը գործը
վերջանայ և իրենք ալ պարձեալ յաջողին Սիւլէյմանը
թահսիլտարի պաշտօնին մէջ դնել: Ու մի' զարմա-
նաք, երբ քիչ ատենէն լսէք յիշեալ զեղծարար Սիւ-
լէյմանի իր պաշտօնին մէջ վերահաստատուիլը:

Ըսելիք չիկայ շիտակը այսքան բացայայտ ձեռ-
նածութեան:

* * *

Թուրք կառավարութեան հայերու հանդէպ բռնած
ամենագէշ դիրքէն և մշտական կերպով հայ ժողո-
վուրդին դէմ ցցուող կոտորածի սարսափէն շփացած
են բոլոր մեծ ու պզտիկ պաշտօնեաներն ու ժողո-
վուրդը, նոյն իսկ իրենց լսածերը: Թուրք ոստիկան մը փո-
լիս մը կամ զինուոր մը ինքզինքնին ամենաբարձր պաշ-
տօնատար մը կը կարծեն և այդ կերպով ալ ունին
անտանելիօրէն հպարտ ընթացք մը: Հետևեալ դէպ-
քը կրնայ ցոյց տալ թէ ատոնք իրենց սրտերուն ու
մտքերուն մէջ որպիսի սուսալի խորհուրդներ ու ծը-
րագիրներով կ'ըմաղին հայերուն վնասելու համար, թէ
որչափ ալ լաւ տեսնուիլ կեղծեն հայերու հետ, ա-
սոր հետ մետեղ նորէն առիթը գտնելուն ամէն տե-
սակ վնասներ հասցնելու տրամադիր են: Թուրքիոյ
մէջ ամէն տեղ, Գա ն ու ն չ ա վ ու շ ի (կանոնը պա-
հել տուող) անուևով պաշտօնեաներ կան, որոնց գոր-

ծըն է շուկային մէջ ամէն կողմ պտտել ու օրէնքի
հակառակ և անվայել ընթացքներու մէջ գտնուող
զինուորական և կառավարութեան պաշտօնեաները յոր-
դորել, սաստել և ի հարկին պատժել: Ասոնք իրենց
համազգեստին կործրին վրայ մասնաւոր դարդի կո-
ճակներ, և թիթեղ մը ունին՝ որուն վրայ պաշտօնին
անունը գրուած կ'ըլլայ: Գանուն չափուշի մը, որ գի-
նեմով է իսլամներէ զգուշացած ըլլալու համար, սո-
վորութիւն ըրած է եզեր հայոց շուկային կողմը հայ
տղու մը սրճարանը մտնել և օղի խմել, . . . այս-
պէսով իր պաշտօնին գիտակցութեան և հաւատար-
մութեան շահուն մէկ ապացոյցը տալով: Քանի մը
անգամներ կ'իրթայ կուգայ և օղին դրամը կը վճարէ:
Հեղ մըն ալ երբ 5 դուրուշի պարտք կ'ընէ ու երկար
ատեն չ'վճարեր, տղան, որ աղքատիկ է, կ'ըստիպուի
ուզել: Գանուն Չափուշին զայրացած, պարտքը կ'ուրա-
նայ և կ'ըսկսի անլուր անարդարներ ու հայոյանքներ
թափել խեղճին գլխին: Ապա, որպէսզի, տղուն ա-
ւելի վնասելու կարող ըլլայ, հոտ, շուկային մէջ, բազ-
մաթիւ մարդոց ներկայութեան, համազգեստին կոճակ-
ները կը փրթցնէ ու ձեռքը առած փոխաներուն կը
դիմէ, բողբելով թէ այդ տղան զինքը ծեծած է և
պաշտօնական նոտրական կոճակներն իսկ փրթցնելով
անարգելու յանդգնութիւնն ունեցած է: Սուտը պո-
չով կ'ըլլայ սակայն, և առաջին ակնարկով կը հաս-
կցուի թէ եղածը պարզ զրպարտութիւն է, որովհե-
տև տղուն Փիզիքական կաղմուածքը չէր ներեր որ
այդ Գանուն չափուշին ծեծած ըլլալը հաւանական նը-
կատուի: Գանուն չափուշին այս խօսքերը երբոր թուրք
սրիկաները կը լսեն, անմիջապէս արժանապատուութեան
վիրաօրանք սեպելով հայ տղու մը երևակայական
այդ յանդգնութիւնը, կը թափին այդ շուկան՝ հաս-
կըցնելու համար անշուշտ հայերուն թէ իրենց է մը-
նացեր կառավարական պաշտօնեայի մը հետ այսպէս
վարուիլ կամ իրաւունք պահանջել: Ահա այս կեր-
պով խեղճ հայը ո՛չ իրաւունքը պաշտպանելու ազա-
տութիւնը ունի ո՛չ ալ ստացուացքը: Ասոր վրայ աւել-
ցուցէք նաև այս կարգի խնդիրներու առնելիք ընդ-
հանուր գոյնը, ան ատեն կրնաք ընդունիլ թէ թուր-
քիոյ խեղճ հայուն վիճակը ամէն օր նահատակուի է:

* * *

Թուրքիոյ համար սա ալ ճշմարտութիւն մըն է՝
թէ պաշտօնեաներուն քմահաճոյքները իբրև օրէնք
յարգել կը տրուին հայերուն: Օրինակով խօսինք:
Մեր քաղաքի մէջ և թերևս ուրիշ շատ մը տեղեր
ալ, սովորութիւն է որ Ծնունդին ու Չատիկին զի-
շերը տեղայն աղքատախնամ մարմինը մասնաւոր եր-
գիչ խումբ մը կը պտտցնէ գունբը: Հայ աղքատներու
հաշար դրամ և ուտելիք հաւաքելու, այդպիսի հան-
գիսաւոր օրերու մէջ գէթ ամենապզտիկ սփոփանք մը
տալ կարողանալու համար անոնց տառապեալ կեան-

բի: Այս խումբը, որ աղբատարաններ կողմէ կընտրուի և Առաջնորդարանի կողմէ կը վաւերանայ, գուռնէ գուռ կը շրջի և իւրաքանչիւր դրան առջև Զատկու-
ուն կամ Ծննդեան յատուկ կրօնական երգ մը կեր-
գէ: Տեղիս բարեճաղիկ Գոմիսերը, Թողատցի Հաֆըզ
աղայ, որ իր օրով ասանկ նոյն իսկ ամենապղտիկ եկե-
ղեցական առանձնաշնորհութեամբ չկրնար հանդուրժել
գիշերուան մէջ արձակուած այս եղանակները անախորժ
կըզգայ և որովհետեւ գիշերը ատով քչիկ մը անհանգիստ
կըլլայ, ինքզինքը այդ ձանձրութենէն ազատ պահելու
համար Ծնունդին գիշերը երգիչ խումբը քովը կան-
չելով «գարս գու պատուիրեցիր» կը յանդիմանէ և
արգելք կը դնէ, մինչդեռ կոտավարիչը յարգանքով
կը վերաբերի հայկական այս վաղեմի սովորութեան
հանդէպ և նոյն իսկ իր առջև երգել տալով լե-
ցունկէկ նուէր մըն ալ կուտայ: Նոյն... մեծու-
թիւնը այս Զատկին ալ իր այդ արգելքը դնելու քը-
մահաճոյքը կունենայ... և, շնորհով իր այդ զազիր հա-
ճոյքին՝ հայ աղբատներն ալ Զատկուան այդ նիւ-
թական պղտիկ մտիթարութենէն կը զրկուին: Ու ո՛չ
մէկը կենէ բողոքել այդ բացարձակ ապօրինութեան
դէմ... որ դարերէ ի վեր նուիրագործուած սովորու-
թեան և կրօնական ու եկեղեցական պահանջումի մը
հանդէպ ոտնձգութենէ զատ ուրիշ բան չենթադրեր:
Վաղը միւս օր թերևս եկեղեցիին զանգակներուն զօ-
ղանջն ալ արգիլէ, քանի որ զինքը անհանգիստ կը-
նէ...

ՀԱՅԿԱԶՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԿԱՍԻՑ

ԹԻՖԼԻՍ, 24 Յունիս 1905

Ուսու կառավարութեան անառնի ոտնձգութիւն-
ները չափ ու սահման չունեն:

Ինչպէս գիտէք, Կովկասում յեղափոխական հը-
զօր շարժումը թուլացնելու և նրան անգամահատելու
համար, սկսեցին հայկական ջարդեր թուրք մալեանդ
և տգէտ ամբոխի միջոցաւ: Թիֆլիսում, թուրք ամ-
բոխի քիչութեան և անզօրութեան պատճառաւ և
մասամբ էլ, որ այստեղի թուրքերը առհասարակ խը-
րատեցին Երևանի դէպքերից և մասամբ էլ լաւ են
տրամադրուած դէպի հայ և վրացի ժողովուրդները,
իրանց չէզօր են պահում՝ որ և է գժբախտ դէպք
յարուցանելուց՝ խաղաղ անցաւ:

Այդ պատճառաւ, սկսեցին ագիտացիա անել
ուսու խաւար ամբոխի մէջ, նրանց վստ տրամադրելով դէ-
պի հայ և վրացի գիտակից բանւորները, որից յետոյ
այսպէս ասած, «խուլիգանները» կամ ուսու պատ-
րիօտները թե ու թիկունք ստանալով ոստիկա-
նութիւնից, սկսեցին ծեծել պատահած գիտակից բան-

ւորներից մի քանիսին: Այդ ողորմելիները իրանց յի-
մարութիւնները այնտեղը հասցրին, որ սպանեցին և
վիրաւորեցին մեր ամենալաւ բանւորներից երկուսին:

Օգէքերը նրանք ստացել են ոստիկանութիւնից,
որի ապացոյցը զէնքերի միատեսակութիւնն է:

Այդ պատճառաւ Թիֆլիսի կոմիտէն հրատարա-
կեց մի կոչ երեք լեզուներով, որով ամբողջ քա-
ղաքի ազգաբնակչութիւնը հրաւիրոււմ էր գործադուլի
միջոցաւ ստիպել կառավարութեանը, զինամասի ա-
նել «խուլիգաններին» և այդ և նման դէպքերի ժա-
մանակ ազգաբնակչութիւնը պաշտպանելու համար ըս-
տեղծել քաղաքային միջիցիա, որը պիտի պահէ ըս-
գաքի հաշուով:

Ամսոյ (Յունիս) 20ից սկսեց ընդհանուր գոր-
ծադուլը, երբ թողին աշխատանքը և դէմօնսդրատիւ
կերպով դուրս եկան արհեստանոցից Անդրկովկասեան
երկրթուղու արհեստանոցների բանւորները, որոնց հե-
տեկցին այլ և այլ մասնաւոր արհեստանոցների և
գործարանների բանւորները: Դրանից յետոյ դադա-
րեցրեց երթևեկութիւնը Կօրպանովի ձիաբարձը:

Ամսոյ 21ին, ճաշից յետոյ մեծ աղմուկով փակ-
ւեց Թամամշևի ամբողջ քարվանսարան և վաճառա-
կանները ցրեցին փողոցները և ստիպեցին միւս վո-
ճառականներին էլ փակել խանութները:

Ելեբարական տրամալոյր, որը մինչև այդ աշխա-
տում էր, դադարեց աշխատելուց և քաղաքը մնաց
առանց ելեբարաբարչի:

Ոստիկանութիւնը սկսեց ոյժով բանալ տալ խա-
նութները: Կօզակները ման էին գալիս խմբերով և
ստիպում էին և կամ հէնց իրանք էին բաց անում
խանութները:

Երբ ոստիկանութիւնը կտրեց մի գինեվաճառի
խանութ, նա հեռուում կանգնած հայհոյանք թափե-
լով ասում էր. «2եր հէրն անիծած, դուք կտրե-
ցիք իմ խանութի մի գուսը, իսկ ես նորը շինել կը
տամ, բայց այնուամենայնիւ չեմ թողնի, որ ձեր կամ-
քը կատարած լինէք, որովհետեւ ես կօմիտէի ասածնե-
րը թանկ եմ դնահատում»: Երբ ոստիկանութեան
ստորին պաշտօնեան յայտնից այդ մասին իր մեծա-
ւորին, նա վախից նոյն լախ ուշադրութիւն էլ չը
գարձրեց և հեռացաւ:

Ոստիկանութիւնից իրանց լրբութեամբ աչքի են
ընկնում ոստիկանապետը, 5րդ և 6րդ քաղաքամասի
պրիստաւները (Գլէբով և Գուրգենիձէ) և 10րդ քա-
ղաքամասի թաղապետ ոստիկաններից մի լիրբ հայ,
Բաբախանով աղբանւամբ, որոնք շատ եռանդուն կեր-
պով ստիպում են խանութպաններին բանալ իրենց
խանութները: Պէտք է ասած, որ մեր խանութպան-
ների և խոշոր վաճառականների մի մասը շատ ան-
պիտան կերպով է վերաբերում դէպի այս շար-
ժումը: Եւ ցաւօք սրտի, այս տեսակ խանութպան-
ները գլխաւորապէս հայեր են, որոնք իրանց չարչի-

ուժեամբ և կծծի բնաւորութեամբ չեն ուղղում մի քանի յաճախորդ ձեռքեց քաց թողնել և ոստիկանութեանը դիմելով ու նրանից պահապաններ ստանալով, սկսում են առևտուր անել: Գրանց մի մասն էլ, որպէս զի վառ մարդ զուրս չը գայ թէ «կօմիտազիները» և թէ ոստիկանութեան աչքում, խանութները փակելուց յետոյ կանգնում են խանութների դռներում: որ եթէ ոստիկանութիւնը գայ և ստիպէ բանալ, բանան, իսկ ապա մեզ մօտ արգարանան թէ, մենք փակեցինք, բայց ոստիկանութիւնը ստիպմամբ բանալ տեղց մեզ: Այնտեղ և նախատինք այս տեսակ անաւթ արարածներին: Աէրայի կամուրջի մօտ կանգնեցնում են անցորդներին և խուզարկում: Եւ եթէ անցորդը բանւոր է, տանում են ոստիկանատուն:

Ղուրբեր են պատում թէ, ամսիս 27ից պիտի յայտարարուի պատերազմական զրուժիւն, կովկասեան փոխարքայի կարգադրութեամբ*): Փոխարքան կովկասը խաղաղեցնում (sic) է . . .

Յունիսի 23ին քաղաքային խորհրդի դահլիճում կայացաւ քաղաքային վարչութեան մէջ ծառայողների խորհուրդը: 74 ձայնով ընդգէմ 38ի ժողովը վճռեց գործադուլ յայտարարել քաղաքային վարչութեան մէջ բոլոր ծառայողների համար:

Չարմանալի է Գաշնակցականների վերաբերմունքը, որոնք աշխատում էին այդ ժողովում օպպօզիցիա կազմել և խանգարել գործադուլը: Բայց ժողովը փառաւոր կերպով սեւացրեց այդ խմբակցութեան մի ազիտատօրին, անւանելով նրան «խուլիգան»: Չար լեզուները ասում են, որ այդ կուսակցութեան շէֆերը պատրաստում են մի թուռցիկ հըրատարակել և հրաւիրել հայ ազգաբնակչութեանը (հասկացիր հայ բուրժուազիային և վաճառականներին), գործի կենալ և աշխատանքները վերսկսել: Կեցցէ Գաշնակցական ոստիկանութիւնը, որոնք ոչ մի բանով չեն ուղղում զիջած լինել ուս ոստիկանութեանը:

Եւ այս բոլորից յետոյ այդ տեսակ մարդիկ դեռ յաւակնութիւն ունին իրանց յեղափոխական և այն էլ սօցիալիստ յիշատի. կոչելու: Որպէս զի կարողանան որ և է կերպ վնասած լինել Ռ. Ս. Գ. Բ. Կ. թեան այս պարօնները դիմում են ամեն տեսակ զբզւելի միջոցներին:

Մարտի քաղաքը սարսափի մէջ է: Գիշերները փողոցներում ոչ մի մարդ չի կարելի տեսնել, որով հետեւ ամբողջ քաղաքը մթութեան մէջ է թաղւած:

H G.

*) Պատերազմական զրուժիւնը արդէն յայտարարւած է:

Գործադուլը տարածւեց ամբողջ քաղաքում Յունիսի 24-25ին:

Մասոյս 24ին, կողակները, զեկավարութեամբ պըրիստաւ Փիրուսովի, յարձակումներ գործեցին Աերայի խանութների վրայ:

Չեն խրատուում մի քանի հիմնարկութիւններ և դարձեալ շարունակում են իրանց հաշտապահներին աշխատեցնել: Թւեմ մի քանիսների անունները: Աշխատել են ստիպում Տօլէի Ապօնի գործարանում իրանց հաշտապահներին: Նոյնը անում են Ագելխանեանի գործարանը և Առևտրական ու Ազնաականների բանկերը: Թիֆլիզի դէպքերը արձագանգ դտան և գաւառներում: Գօրիում և Միխայլովում յայտարարւած է ընդհանուր գործադուլ: Նոյնպէս գործադուլ է Շօրապանում և Սամորեդիում (Քուժայիսի նահանգ): Միխայլովում սպանւած է մի կօնդուկտօր և վիրաւորւած մի մեքենավար — երկուսն էլ գործադուլի հակառակորդներ:

Թիֆլիզի Աերա կոչւած քաղաքամասում սպանւած է կարի մեքենայի արհեստանոցի տէրը, որը հըրաժարում էր փակել արհեստանոցը: Մի քանի խանութպաններ մինչև օրս շարունակում են գաղտնի կերպով առևտուր անել:

Ուրբաթ, երեկոյեան ժամը 7ին, քաղաքի կենտրօնական մասերից մէկում, Սալլատոկի բաղաբում, մի ուսմբ պայթեց, որին զոհ դնացին երկու կողակ և վիրաւորեց մի կողակ, իրանց ձիերի հետ միասին: Նոյն օրը, ժամը 8 և կէսին, ուսմբի պայթումից վերաւորեց յայտնի հայատեաց պրիստաւ Գլէբօվը, որ վերջին դէպքերի ժամանակ աշխարայ կերպով զէնք էր բաժանում թուրք վայրենի ամբոսին և գործադուլի ժամանակ կտրատում և փչում էր խանութները, անխնայ կերպով ձեծի ենթարկելով խանութպաններին և անցորդներին:

Սրա հետ սպանւեց և մի օկօրօզնի՝ Չիկվիձէ ազգանունով: Վիրաւորեցին թեթեւ կերպով երկու հոգի պատահական անցորդներից: Նոյն գիշերը ժամը 10ին, քաղաքի ծայրերից մէկում — Կախտինսկի փողօցի վրայ, որը տանում է դէպի Նաւթուղ, մի ուսմբի պայթումից սպանւեցին և վիրաւորեցին 10 կողակ, մի դռնապան և 4 կողակի ձի:

Շաբաթ օրը, երեկոյեան ժամը 9ին, մի ուսմբի պայթումից մեռան երկու ոստիկանական ստորին պաշտօնեայ (գօրօդօվօյ) և երկու դռնապան:

Վնասեցին մի քանի հոգի պատահական անցորդներից:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 5ին Հաւլաբարում, տարձանակի 7 հարւածով վիրաւորեց մի օկօրօզնի Թօ խէվսկի ազգանունով:

Մայրան տէնօրներ կատարելուց յետոյ սա և կակի արգարն է, որ տէնօրիստներին չը կարողացան

վիրաւորել և ձերբակալել: Միւս բոլոր տէնօրիստները ազատ են: Ամբողջ քաղաքը լցւած է վայրենի կօզակներով, զինւորներով, ոստիկաններով ու գոնապաններով:

Մուծը ընկնելուց յետոյ քաղաքի որոշ մասերում կանգնած ոստիկանութիւնը խուզարկում է անցնող դարձողներին և եթէ որ և է մէկի մօտ գտնուում է զէնք կամ որ և է կասկածելի իր կամ թուուցիկ անխնայ կերպով սկսում են ծեծել և քաշ տալ ոստիկանատուն:

Քաղաքի ազգաբնակչութեանը պատել է անընկարգրելի սարսափ: Գործագուրը դեռ շարունակւում է: Շաբաթ, 25 Յունիսի, Հայոց կաթողիկոսը գնաց փոխարքայ Վօրժնցով-Գաշկովի մօտ: Նա էլ եկաւ փոխայցելութեան:

H. G.

ԱՍՏԻՆԱՆ, 28 Յունիս 1905

Կեանքի զօրեղ և ուժգին պահանջները կօտրեցին և մեր քաղաքային վարչութեան անտարբերութիւնը: Գուժան հասկացաւ իր վրայ դրած պարտականութիւնը և միացաւ ընդհանուր պահանջին, որ ներկայումս լսուում է ամեն տեղ: Ծայրայեղ-լիբէրալների հոսանքը արդէն զօրեղ գիմադրութիւն է ցոյց տալիս թէ միապետական պահանջներին և թէ իրանց մէջ դեռ թագաւորող պահպանողականներին:

Բերենք մի քանի նմուշներ այդ գիմադրութիւններից:
Վահանգապետը վճռում է տեղական պօլիցիան զինել նոր տեսակի զէնքերով և այդ նպատակով պահանջում է քաղաքային վարչութիւնից յատկացնել որոշ չափով դրամ: Գուժայում՝ ծայրայեղ հոսանքը բաւական չէ որ ամեն կերպ գիմադրում է նահանգապետի առաջարկին, այլ և խնդիր է յարուցանում պօլիցիականներին բոլորովին զինաթափ անելու մասին և նրա տեղ առաջարկում է քաղաքային միլիցիա մտցնել:

Շշմել էին պահպանողականները, այդ ո՛ւր են հասել մեր բողոքները, մտածում էին նրանք, նոյն իսկ չեն քաշուում ծայրայեղ յեղափոխական պահանջներ անել: Եւ թէև քէարկութեան ժամանակ շնորհիւ այն պատահական հաշգամանքի, որ չէին եկել մի քանի գիմադրողներ, ձայները հաւաքարայէս կիսում են, — բայց և այնպէս, դա համարում է յաղթութիւն, քանի որ խնդիրը մնում է առկա: Պահպանողականները իրանց ջարդած են համարում, նահանգապետն էլ խոհեմաբար խնդիրը նորից մէջ չի բերում՝ լաւ իմանալով, որ երկրորդ անգամ աւելի զգալի պարտութիւն կը կրի:

Երկրորդ ուժեղ գիմադրութիւնը կայանում էր նրանում, որ ձայնաւորներից մէկը հարցապնդում է անում քաղաքագլխին, թէ ինչո՞ւ նա փետրուար 18ի

ըսկրիպտի առիթով խորհրդակցութիւնը ձգձգում է: Պարան պաշտպանում են միւս ընկերները, և քաղաքագլուխը ստիպւած է լինում զիջել պահանջին: Գալիս է այդ խնդրի արժարժման օրը: Հանդիսականների մի մեծ թիւ եկել էր գուժա լսելու կայանայի վիճաբանութիւնը: Քաղաքագլուխը երկիւղի մէջ է ընկնում: Ծայրայեղ խօսողների ճառին հանդիսականները իրանց բաւականութիւնն են արտայայտում: Չայնաւորներից մէկը, Շմարին ազգանունով, մի երկար բաղաբական բնաւորութեամբ ճառ է ասում, որի մէջ նկարագրում է միապետական մի շարք խաղերը և անւանում է ներկայ կառավարութեան ձևը անպէտք: Նա շեշտում է թէ միակ ելքը ներկայ խայտառակ դրութիւնից տեսնում է այն բանի մէջ, որ պէտք է անպայման հրաւիրել Օրէնսդրական Ժողով, հիմնւած ընդհանուր, հաւասար, ազատ, ուղղակի և գաղտնի ձայնատուութեան իրաւունքի վրայ: Բարձրացաւ մի անասելի ոգևորութիւն, հանդիսականները ծափահարում և գոչում «բաւօ!»: Քաղաքագլուխը չկարողանալով մարսել այդ համակրանքը աճապարում է մտնել իր պօլիցիական դերի մէջ և հրաւիրում է հանդիսականներին կարգի, սպանոյալով հակառակ դէպքում փակել նիստը: Սրան պատասխանում է իրաւասու Ալաճալեան, թէ հանդիսականները ունին իրաւունք իրանց բաւականութիւնն արտայայտելու, և թէ մինչև այդ րոպէն նրանք ոչ մի վտանգ չեն սպանում և պահում են իրանց շատ կօրրեկտ կերպով: Արկին ծափահարութիւններ, կրկին բաւօներ: Քաղաքագլուխը պատէ պատ է կպչում: Սակայն նա շատ խղճալի դրութեան մէջ ընկաւ, երբ պ. Շմարին իր ճառի մէջ արտասանեց «սահմանադրութիւն» բառը: Քաղաքագլուխը վախեցած բացականչեց. «Չեմ կարող թող տալ, որ դուժայում սահմանադրութիւն բառը գործադրելի, առաջարկում եմ խուսափել այդպիսի բառեր գործածելուց: — Սահմանադրութիւն բառը, — բացատրում է Շմարին, ո՛չ մի վտանգաւոր բառ չէ. դա նշանակում է երկրի հիմնական օրէնքները, և եթէ քաղաքագլուխը խիստ վախեցում այդ բառից, ես կը գործածեմ» հիմնական օրէնքները՝ բառը: Հանդիսականների մէջ մի կօշտ ծիծաղ է բարձրանում:

Վերջապէս դուժան ընդհանուր հաւանութեամբ ընդունում է որոշում «պահանջել անյապաղ հրաւիրել օրէնսդրական Ժողով վերև յիշած ձայնատուութեան սկզբունքով՝ երկրի դրութիւնը կարգի բերելու համար»: Որոշումը վճռուում է ուղարկել Պետերբուրգ: Երրորդ բնորոշ նիստը տեղի է ունենում այդ օրերը: Յայտնի է, որ Մոսկւայում դուժայի գործիչների մի ընդհանուր Ժողով է տեղի ունենալու: Այդ առիթով Աստրախանն էլ պէտք էր ներկայացուցիչներ տար: Արկին դուժայում բարձրանում է մի հետաքրքիր վիճաբանութիւն: Ընտրւում են քաղաքի ներկայացուցիչներ Շմարին և Ալաճալեան: Այս օրերս նրանք

պիտի ընկնեն ճանապարհ, եթէ նահանգապետի կողմից արհեստական արգելքներ չը պատահեն: Գնալու է նոյնպէս քաղաքագլուխը, սակայն ո՛չ իբրև ընտրովի ներկայացուցիչ, այլ ըստ պաշտօնի: Քաղաքագլուխները հրաւիրուած են առանց ընտրութեան:

Բերած նմուշները կարծեմ բաւական են բնորոշելու համար այն զժգոհութիւնը, որը զարթել է ամենայն տեղ: Միապետական լէժիմը արթնացրել է շատ քնած խաւեր: Եթէ մի որ և է դուժա, որ դուտ բուրժուական հաստատութիւն է, և որտեղ չկան բուն ժողովրդից ներկայացուցիչներ, այդպիսի պահանջներ է արտայայտուած, դիւրին է ենթադրել, թէ զժգոհութիւնը ո՞ր չափով երևան կը դար, եթէ հնար լինէր ազգաբնակչութեան բոլոր խաւերի ձայնը լսելի անել:

Բայց միապետութիւնը գեռ կը տատանւի մի ժամանակ Բուրժուական ու լիբերալ բողոքները ներքան չեն վախեցնել: Միապետութիւնը կը սպասէ, թէ ինչ կասէ պրոլէտարիատը: Ահա այդ ուժի առաջ է, որ միապետութիւնը սարսուժ է:

Բայց այդ օրն էլ հետո չէ: Հեռագիրները արդէն լուր բերեցին, թէ բանոր պրոլէտարիատը Լոնոն և մարտանաւերի ցոյցերը Օրէսսայում իրանց զօրեղ ձայները արդէն հանել են: Մեղ մնում է սպասել, որ այդպիսի ահեղ գոչեր և ցոյցեր տեղի ունենան դարձեալ մի քանի կենտրոններում և . . . միապետութեան մնաս բարեաւ . . .

ԺԱՆԻՔ

ԱՍՏԻՐՕՊՈԼ (Կովկաս) 9 Յունիսի, 1905

Մեր խաղաղ Ստաւրօպօլն էլ ալեկոծեց: Երկու օր առաջ, ամսոյս 7ին, զինուորական վարչութեան կարգադրութեամբ սպանեցին 17 մարդ և վիրաւորեցին հարիւրի շափ անմեղ զոհեր, որոնց թուում կան երեխաներ, կանայք և ծերեր: Դրութիւնը վերին աստիճանի անպահօժ է: Ահա թէ ինչպէս պատահեցաւ դէպքը: Նոյն օրը կրօնական բապտիստ ազանդէն պատկանող երեք անձնաստրութիւններ վիճաբանութեան էին հրաւիրել պրաւօսլաւ քահանային, որը իբր թէ յաղթել և խայտառակել է, որից յետոյ բապտիստները ծաղրի են ենթարկել պրաւօսլաւ սրբերի պատկերները: Ներկայ եղող ամբօրը կամեցել է լինչի դատաստանով պատժել ծաղրողներին, բայց քահանան ընդդիմանալով յայտնել է, որ տաճարում չի թող տայ արինհեղութիւն և առաջսրկել է բոլորին դուրս դալ եկեղեցուց ու այնտեղ անել ինչ որ կամենում են: Ժողովուրդը խաբուելով դուրս է գնացել: Իսկ քահանան բապտիստներին պահել է եկեղեցում և դուռը փակել: Զայրացած ամբօրը երկար ժամանակ պահանջել է իր ձեռքը յանձնել բապտիստներին, բայց չէ յաջողել: Մինչ այս, մինչ այն զօրքեր են բերել տեղ իսկ միւս կողմից էլ հետաքրքրող բաշմութիւնն է աւելացել, որոնցից շատերը սկսել են այս անգամ ծաղրել

և սուրի զինուորականներին: Երեկոյան մօտ ժամը 10ին Վրամանատարը հրամայում է բժրոստ ամբօրին դնուկահարել, առանց նախազգուշացնելու:

Մեծ զայրոյթ է տիրում այդ անմիտ կատորձի պատճառով: Քաղաքային վարչութիւնը հեռագրով դիմել է Պետերբուրգ, պահանջելով ոտտիկանապետին հեռացնել պաշտօնից և դատի ենթարկել: Քաղաքի մէջ ամեն տեսակ յուզիչ լուրեր են պտտում, մութ ոյժերը ձեռքից բաց չեն թողնում այդ առիթը ազգութիւնների մէջ խնամութիւն սերմանելու համար: Այսօր թաղեցին սպանւած զոհերին, որոնց վրայ մի քանի պատկեր էին դրած. տաքի կը ընկնում մէկը՝ «կամայականութեան զոհերին» մակադրութեամբ: Մի քանի կրակոտ դամբանականներ խօսեցին, որից յետոյ ժողովուրդը ցրեց ղկորչի միապետութիւնը, կեցցէ յեղափոխութիւն» ազգականերով:

Յ.

Կ Ե Ն Ս Ա Գ Ի Բ Ա Կ Ա Ն

ՅԱՐԻԹ ԹԻՎԱԿԱՆՆԵՆ

(ՅՈՎԱԵՓ, ՃԱՆՊՈՒԱԹ)

1876 — 1905

Շապին Գարահիսարի Պարտեզի Հայոց Թաղին մէջ 1876 թուականը ծնունդ տուած է երակայ Յարէթին, որուն հայրը, Անդրանիկ աղա Թէվէբէլեան, զիւղական և փոխ գրի գործով զբաղող բաւական դիրքի տէր անձնաւորութիւն մ'էր: Մանկական տարիքէն հազիւ պատանեկան շրջանը թեւեւստ՝ պըզտիկ Յարէթը կը դրուի իր թաղին Ագգ. Ս Փրկչեան վարժարանը, որ փայլուն վիճակի մը մէջ կը գտնուէր: Տակաւին փոքրիկ հասակին մէջ Յարէթ ցոյց կուտար այն բոլոր ընդունակութիւնները՝ որոնք ապագայ յետափոխական նշանակելի գործիչի մը կեանքին նախաբայլերը կը յատկանշեն: Ուշադիր հոգեբան մը դիւրաւ պիտի կրնար գուշակել յեղափոխականի այն մեծ ապագան, որ բացայայտ կերպով կը ցոյանար այս կրակոտ պատանիին եռանդուն բնաւորութեան և ազգասիրական մաքուր զգացումներուն մէջ: Քիչ ատենի մէջ մեծ դիրքի մը կը տիրանայ իր ընկերակիցներուն և դպրոցին ամբողջ ուսանողութեան մէջ՝ թէ՛ իբր յաջողակ աշակերտ մը և թէ՛ իբրև համակրելի և սիրուած ընկեր մը որուն սրտանց կապուած կզգային իր բոլոր ընկերակիցները: Բարձր և անբիծ նկարագիր մը ու հոգեկան ու սրտի առաւել կամ նուազ անկեղծ զգացումներու փունջ մը իրեն բարոյական հեղինակութիւն մը կը շինեն հետզհետէ,

նկարագրի օրինակելի աստիճան մը՝ զոր կրցաւ միշտ բարձր բռնել, մինչև իսկ Խարբերդի մէջ, կառաւի- նատեղիին, սրամերկ գահիճներուն առջև, իր կեանքի ու գոյութեան վերջին շունչը տալը՝ այնչափ դժբաղդ ու լացընող հանգամ նընդունու մէջ, ու խստաշունչ պայմաններու տակ, աւա՛ղ:

Իր միւս բոլոր դասերուն մէջ ցոյց տուած գո- հունակ յաջողութեան հակառակ, սկիզբէն ի վեր տկար մնացած էր միշտ թուրքերէնի ճիւղին մէջ, զոր կա- տէր մահու չափ, ինչպէս անոր տէրերը, — թուրքերն — ալ: Այնչափ մեծ ատելութիւն կը սնուցանէր տա- ճիկներու դէմ՝ որ իր ուսուցիչներուն թուրքերէն լեզ- ուին կարևորութեանը մասին տուած յորդոջները չէին կրնար երբէք սիրցնել այդ լեզուն, որուն սակայն վերջէն բաւական տիրացաւ, յեղ. գործին մէջ իր ու- նեցած գործունէութեան հետեանքով, փորձառաբար ըմբռնելով անոր օգուտը՝ կեանքին մէջ թրքահայ յեղ. գործիչի մը, որուն գործը յաճախ կառավարութեան գատարաններու և բանտապահներու հետ կը լլայ ճա- կատարականօրէն: Արդեօք մանկական նախազգացում մըն էր որ ատել կուտար իրեն պղտիկուց լեզուն այն բարբարոս ազգին, որ, յետոյ, այնչափ խժոճօրէն և անգութ սառնասրտութիւնով վերջ տուաւ իր օգտա- շատ կեանքին . . . Պատանեկան կեանքի բոլոր տեւ- ղութեանը մէջ միշտ խանդավառ սգեւորութիւնով մը առիթը ձեռքէ չէր փակցնէր կուռելու յոյն և տաճիկ տղաքո՛նքու հետ, որոնց ծնծին ենթակայ կը լլային յա- ճախ անձարակ ու անպաշտպան հայ տղաքոնք, դըպ- րոցական կամ ո՛չ դպրոցական: Տաճիկներուն դէմ մանաւանդ յայտնի վրէժխնդրութիւն մը կը սնուցա- նէր միշտ, յաղթականի անօրինակ համբաւով մը, ո- րուն վախը քաշել կուտար հետզհետէ այդ կուռա- զան այլազգիներուն, որոնք այսպէսով հետզհետէ մոռ- նալ սկսան իրենց բարբարիկ ծեծկուելու սովորութիւն- ները: Յարէթի մանուկ-կուռողի կեանքէն գաղափար մը տալու համար կը բաւէ և կարծէ յիշատակել հե- տեւալ դէպքը, որուն մէջ երևան կուգայ իր անվե- հեր ոգին: Անգամ մը երկու ընկերներով կուռի կը բռնուի Ավութմուշցի արիւնկզակ 15ի չափ թիւով հասակաւոր տղայոց հետ և այնպիսի սոսկալի ծեծ մը կը քաշէ անոնց, որ անոնք այլ ևս վերջնականա- պէս հայոց թաղերուն չեն մօտենար և ո՛չ ալ հայ ծամ- բաներէ կանցնին: Ասիկա բաւական չըլլար, ու միշտ իր ընկերներով ջանադիր կը լլար. անպաշտպան հայ տղաքոնքը պաշտպանել և անոնց ալ ինքնապաշտպանութեան և անկախութեան գաղա- փարը կը ներշնչէ իր և իր ընկերակիցներու այս աղատ ձգտումներով: Այնա՛ր հանգուրծել որ հայ տղաքոնքը ստրուկ մնային անբարոյ թուրքերուն և գէշ յոյներուն հանդէպ: Անմոռանալի ըլլալու է գարձեալ իր բարոյական մարուր կենցաղը, որով միշտ, հետադրօտած է անբարոյականութեան հակամիտող մո- լորած պատանիները և մեծ բարերար ազդեցութիւն

առաջ բերած անոնց վրայ: Մտաւորական, բարոյա- կան, հոգեկան, սրտի ու Ֆիզիքական այսչափ ընդու- նակութիւններով օժտուած պատանի մը բնականաբար պզտիկ զիրք մը չէ՛ որ պիտի կրնար բռնել միջա- վայրին ընկերական պայմաններուն և շրջանակին մէջ:

Յարէթի պատանեկութիւնը կը զուգակցի այն ժամանակներու, ուր յեղ. գաղափարը դեռ նոր նոր, ծաւալ կը գտնէր տուածնաշնորհեալ յեղ. ընդու- նակութիւն ունեցողներուն մէջ: Յեղափոխական գոր- ծիչներ ու պրօպագանդիստներ քիչ քիչ սկսած էին յարաբերութիւններ հաստատել շրջանակներուն հետ և կազմական կանոնաւորութիւններ առաջ բերել հե- տըզհետէ խտանալով Հնչակեան կուսակցութեան ժո- ղովորական դրօշին տակ: 1889-90 Յարէթ, հաղիւ 14-15 տարեկան, առանց որ և է թելադրութեան, իր ընկերակիցներուն հետ, յիղ բնածին զգացումներէն մըղ- ուած, տակաւին դպրոցական դրասեղաններու վրայ, կը կազմակերպէ պատանեկան խումբ մը և կսկսին միշտ վառ պահելու ջանք մը ընել ազգասէր զգացումներ: 1890ի կարնոյ և Գուճաբուրի ցոյցերը կը ցնցեն հայ ժո- ղովորդը, ու այս պատանի խումբն ալ, աւելի՛ հը- րահրուած և վառուած, կը յառաջանայ իր նպատա- կին մէջ:

Ասկից վերջ 2 տարի ևս կը մնայ դպրոցին մէջ և ապա, հայերէնի և ուրիշ ճիւղերու մէջ բաւական պաշար համբարելէ վերջ, ընտանեկան պարագաներու հորկազրութեանը տակ վարժարանը կը թողու և հօ- րը գործով երբեմն քաղաքը և երբեմն ալ Ածպտեր գիւղին մէջ առեւտրական գործերով կը զբաղի: Յարէթ, գործնական կեանքին մէջ մտնելով չթողուր սակայն իր զգացումները՝ անմշակ, այլ միշտ միւսոյն աշխոյ- ժով որդեգրած յեղ. գաղափարը, աստիճանաբար աւելի լայն սահմանի մը մէջ կը սկսի գործել միշտ նուիրուած իր գաղափարին սուրբ ըմբռնումներուն: Ի- րերու բնական ընթացքով և Միութեան յարածուն ծաւալումով՝ Գարահիսարի և շրջականերուն մէջ թափ կանոնէ յեղ. գործը և ժողովուրդը քեզի քեզի կըս- կըսի համակիր շեշտով մը գիտել յեղափոխութիւնը, տակաւին քօղի տակ: 1893ին Հնչ. կուս. կեդրոնի ներկայացուցիչ պ. Արամի հասնելէն վերջ միութիւնը ալ իր վերջնական կազմակերպութիւնը կը ստանայ և Յարէթ կը զինուորագրուի Հնչ. կուսակցութեան մէջ: Ու այնուհետեւ կը սկսի Հնչ. անունով գործել ընդ- հանրապէս Ածպտերի և շրջակայ գիւղերուն մէջ, ուր կը մնար առ հասարակ այդ տարիներուն մէջ, իրենց գիւղական առեւտրական գործին վրայ:

1894ին Գարահիսարի Հնչ. Մասնաճիւղի վար- ջութիւնը կորուշէ ահաբեկող ցոյցով մը սպաննել Ած- պտեր գիւղի միւտիր Էսէթը, քէհեա Եփրեմը ու միւտիրին ծառան՝ որոնք գանձակից գործակցութիւնով մը գիւղին և շրջակայ հայերուն պատու հասն էին դար- ձած, նիւթապէս ու բարոյապէս ջանալով ձգմել և ստրուկ պահել բոլոր հայ շինականները, որոնցմէ ո՞

ըր արգեօք կրնար անոնց կամքին հակառակ շարժիլ: Յարեթ, գիտակից վրէժխնդրութիւնով մը՝ այս արգար պատիժին և վրէժխնդրութեան ջերմ կուսակիցն ըլլալով՝ սիրով կառաջնորդէ հրոսակային խումբը և կը պահպանէ Ածպտերի շրջակաները զանոնք լռութեամբ շարունակ ըլլալիք գործը, որուն գործադրիչը պիտի ըլլար խումբը, կաղմուած հրոսակ կամ ոչ-հրոսակ ընկերներէ: Օրերով, սոսկալի նեղութիւններու մատնուած, չկուսակցիներով իսկ իր պարագաներուն և շատ ընկերներու կը կերակրէ ու կը խնամէ խումբը, անձամբ հայթայթելով և տանելով խումբին կերակուրն ու այլ պէտքերը, յաճախ կէս ժամուան կամ մէկ ժամուան հնուարութենէ հասնելով անոնց՝ կատարեալ չարբաշուծիւնով: Կոյն տարուան Սեպտ. 4ին գործը կը կատարուի և խումբը փառաւոր մուտքով մը, իրիկունս դէմ Ածպտեր մանելով, իր պարտականութիւնը կը կատարէ և կը քաշուի մօտակայ անտառը: Սպաննուող միւսերի և ընկերներուն հետ սպանութեան վայրը գտնուող Արամ Պ. Վարդեան (գաղափարակից ընկեր մը), կառավարութեան խաբբայ խոստումներէն շտանալով և սպաննալիքներէ վախնալով ըրած մատնութիւններուն հետեանքով թէ՛ քաղաքին և թէ՛ գիւղերուն մէջ ձերբակալութիւնները կրկնուին և քիչ օրեր վերջ Յարեթն ալ՝ տակաւին 19-20 տարեկան Ածպտերի մէջ ձերբակալուելով մօտակայ գայմագամութեան՝ Էսիրէս կը զրկուի: Այսպէս կառավարութեան անօրէն պաշտօնատերերը, չկրնալով ձերբակալուածներու հարցաքննութիւններէն բան մը բաղել կրկնին անօրինակ խժոճութիւններու և տանջանքներու մատնել բանտարկեալները՝ բանի բան մը կորցնելու համար անոնց բերանէն: Գազանութիւնը չափ և սահման չունենար և ծեծ ու խոշտանգանք իրենց բոլոր սոսկալի տեսակներովը կը գործադրուին խեղձերուն վրայ: Սակայն Յարեթ, բոլոր զովանքներուն, նեղութիւններուն քաջաբար տոկալով ու համբերելով կատարեալ համարձակութեամբ կը պաշտպանէ ինքզինքը և բնաւ բերանէն բան չփակցնելու քանի մը օրեր վերջ Գարահիսարի բանտը փոխադրելով ծանրը շղթայ մը կը զանեն Յարեթի ոտքին: Յարեթ սիրով և յօժարութիւնով, քաղցր պարտակնութիւն կը համարի, յեղ. գաղափարի սիրոյն համար, հաճոյքով կրել այդ շղթան և ճշմարիտ ու արդար պարծանքով մը շախրցնել բանտի շրջափակին մէջ: Բանտին մէջ վատ Արամի ու քանի մը թոյլ ընկերներու դատավարութեան առեն իրենց առջի ի ֆ ա տ է ն փոխելու համար ցոյց տուած յամառ վախկոտութիւնը օր մը, այնչափ կը զայրացնէ զայն, որ քիչ կը մնայ սպաննէ ատենը: Գատավարութեան առեն վերջապէս 6 տարի բանտարկութեան վճիռ կընդունի և 10 ամիսի չափ փակուած մնալէ վերջ կայս. ներման արժանանալով կսգատուի: Այս բոլոր իրութեան և ֆիզիքական նեղութիւններէն, տանջանքներէն ու բանտարկութիւնէն վերջ, Յարեթ փոխանակ վհատելու և թուլ-

նալու, ընդհակառակը աւելի կը վառուի յեղ. գաղափարով և վերանորոգուած աւելնով մը զարձեալ գործունէութեան կրկնի:

(Շարունակելի)

ԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուս բանակալ կառավարութիւնը կատարելապէս իրարանցման մէջ է: Աժողով լայնածաւալ Ռուսաստանը բռնկած է յեղափոխական հրդեհով: Այսօր Օրենսդրութեան, վարչապետ, լոճ և ամենայն տեղ գործադրող, հրդեհ, կոտորած, տէնոր, բմբուսութիւն գործի մէջ, ըմբոստութիւն և անհնազանդութիւն ծււալին գործի և, բոլոր ամենատարօրինակն ու արտասովորն է, կազակների մէջ: Այլ ևս միանգամայն անհնարին է թրեւի այն բոլոր տէնորները, յեղ. ըմբոստութիւնները, ուսմանի պայթիւններն ու զանազան բարձրատիճան պաշտօնեաների—Մուկոմալի օստիկանապետ Շուքուրովի—կատարածներն ու խողխողումները, որոնք զիտապատ գետին են ընկնում յեղափոխականների հարւածների ներքոյ . . . Ոչ մէկը այս բոլոր զէպքերից այնքան նշանակալից, այնքան վեհ և հոյակապ չէր, որքան «Կինուա Պատեօմիին» գրահակի տպոտուութիւնը, որ ահ ու սաբսափ տարածեց, որս բռնակալութեան վրայ, որ պատերազմի դաշտից ամօթահար յետ փախչելու ստիպից զեռ ևս զինուորական գործողութիւններ չսկսած կրիզեր ծովապետի ավազի Սե Շուքուրով անաւտորմը և որը, ռուսային, շատ շարժուց կեյտով աւարտեց իր շեղ գործը, խորին ցուտով պիտի արձանագրենք, վերջը անձնատուր լինելով Ռուսական կառավարութեան, զեռ ևս իր հոյակապ և հիւսցման արժանի ձեռնարկին ձեռնամուխ չէրած . . . Երկու երկուք արեգակապետ պատմութեան մէջ: «Պատեօմիին» զէպքը մի հրաշքի օգրեւոյթի էր նման, որ փայլեց ռուս յեղ. հրդեհում և անյայտացաւ, խոր տպաւորութիւն և սննջելի հետքեր թողնելով գարիզմի ճիրաններում տոշուող, հեծեծուող միլիտարու ժողովրդների սրտերում: Գեռ գրաւոր պատմութիւնը կատարելապէս թարմ, ահա խոտութիւններ և ապստամբութիւններ կրօնշատուում, լիբովայում: Բայց սրտեղ չկայ արգեօք: Էլ չենք խօսում կովկասի զէպքերի մասին, չենք խօսում ցարիզմի հրէշուոր մեքենայութիւնների մասին, հարեւան ազգութիւններին միմեանց կողմնորոշու, միմեանց արիւնում լեղալ տուա անարդ քաղաքականութեան մասին: Բայց այդ բոլորը երկար չէ շարունակելու: Ռուս ժողովրդի համբարութիւնը հասել է, ոչ միայն կապիտալիզմի և ցարիզմի ճիրաններում կրկնակի տապալուող պրօլետարիատի, այլ և բարձու, լիբերալ «ազնուական» և «իշխանագուն» կոչուած ձրիակեր գասակարգերի, որոնք ահա վերջիւս, մանաւանդ, առանձին եռանդ ու աշխոյժ են ցոյց տալիս, Կիկուա Բ. զահճի երեսին շողոքութիւններում շողոքելն զարձը-

ւածներ շաղկապ յետոյ — յանձին իշխան Տրուբեցկոյի — ազատելու, վերջապէս, բարձրագոյն կապանքներէն, որք իր չափն ու սահմանը արդէն անցրել է: Զէմըստը լծոների կօնգրէսն է, որ ահա քանի որ է շարունակուում է հակառակ դազան Տրեպօլի կամքի, և ըստ իւր հայեացքների, Ռուսաստանի ասպագայ բարօրութեան համար ծրարիր ու նախագծեր որոճուում: Ինչքան էլ ըզգոյշ, «խոհեմ» և երկչու բնաւորութիւն ունենան այդ ժողովները, որքան էլ բացակայ են խիզախութիւնից և յեղափոխական ըմբոստ յատկանիշից, այնուամենայնիւ այժմ շատ հետաքրքիր են այդ ժողովները, որոնց հետ համառոտակի ծանօթացնենք մեր ընթերցողներին, առնելով եւրօպական թերթերից

Յուլիո 13ին բացեց Զէմստիւօնների կօնգրէսը իշխան Գօլզօրուկովի բնակարանում: Օրակարգի խնդիրներն էին՝ Բուլիզիի նախագծի քննութիւնը, ազգային ներկայացուցչութեան խնդիրը, միջոցներ ձեռք առնել զէմըստիւօնների և քաղաքացիութիւնների պատրաստած հիմնական սկզբունքների յարմարեցման առթիւ, ևայլն: Առաջին նիստին ներկայ էին 225 անդամ քաղաքացիութիւններից. նախագահուում էր կօմս Էայլէնը: Իստան ակտեց պ. Գալօփինի, կօնգրէի կազմակերպութեան բիւրօյի նախագահի զեկուցագրի ընթերցմամբ, որ վերաբերում էր կօնգրէի իրականացման և կազմակերպութեան առթիւ ծագած նիւթակէն դժարութիւններին: Ժողովը ցանկութիւն յայտնեց, որ այն վաւերացրել էր և նամակագրութիւնները, որոնք փոխանակել են կառավարական վարչութեան հետ, պահպանեն իբրև պատմական թանկագին վաւերացրած: Գ. Գալօփին հազիւ թէ յայտարարեց, թէ Մոսկովայի ընդհանուր նահանգացիութեւ խօստացել է ոչ մի ծայրայեղ միջոցի չդիմել կօնգրէի նկատմամբ, երբ յանկարծ ներս մտան ոստիկանապետը, ստալիանական պրիստանները և բազմաթիւ օգնականներ ու ոստիկաններ:

Ոստիկանապետը յայտնեց, թէ ոստիկանութիւնն արգելում է ժողովը և իրեն հրահանգած է զրուել ներկայ վաւերացրածը: Եւ կարգաց պատժական օրինակները և ներքին գործերի մինիստրի արձակած շրջաբերականը: կօնգրէի նախագահը պատասխանեց, որ այս յօդուածներն ու շրջաբերականները ներկայ հանդամանքներում ոչ մի նշանակութիւն չունեն: Երբ ոստիկանապետը կամեցու գրի առնել կօնգրէի անդամների ազանունները, բազմաթիւ ձայնք արդաղակեցին. «Գրի առնէ ամբողջ Ռուսաստանը»: Շատ անձինք, որոնք զէմըստիւօնի անդամ չէին, բայց ներկայ էին ժողովին, խնդրեցին, որ իրենց ազանունն էլ գրի առնեն: Ապա ոստիկանապետը դուրս ելաւ արձանագրութիւն — պրօտօկօլ — կազմելու, մինչդեռ ժողովը վերսկսեց իր նիստը:

ԲՈՒԼԻԳԻՆԻ ՆԱԽԱԳԾԻ ՔԵՆԱԳՆՈՒԹԻՒՆԸ

Ղառախօսները քննադատում են կառավարութեան կազմած Ժողովի նախագիծը այն չափով, ինչ չափով որ

ծանօթ է արդէն: Երանը յայտարարում են, որ ամբողջ նախագիծը՝ այսօրինակ հիմունքներով՝ ազգային ներկայացուցչութիւն չէ կազմուում, չէ խաղաղեցնում երկերը, չէ վերջացնում օրէ օր աճեցող վտանգը, չէ դարձանում ներկայ անարխիական գրութիւնը, և չէ առաջնորդում զէպի խաղաղ և հաստատ հիմքերի վրայ զբաւած զարգացումն: Միևնոյն ժամանակ կօնգրէն ընդունում է, որ ընտրողական ամբողջ ժողովը պէտք է ամփոփէ կայսրութեան սօցիալական ուժերի մի խոշոր մասը և սօցիալական շարժմանը կենտրոն ծառայէ, ձրգտում ունենալով քաղաքական ազատութիւն և կանոնաւոր ազգային ներկայացուցչութիւն պատկերացնելու: Հետեւաբար, ժողովը ցանկալի է համարում, որ այն զէպուում, երբ Բուլիզիի նախագիծը կամ համանման մի նախագիծ ընդունի, Զէմստիւօնների և քաղաքացիութիւնների պատգամաւորները, ներդաշնակ գործելով, հաստատուած ծրագրի համեմատ, պարտաւոր են մասնակցել ամենալայն չափով Ժողովի կազմութեան, նպատակ ունենալով մի սոււար խումբ կազմելու և երաշխաւորութիւն ձեռք բերելու անհատական ու քաղաքական ազատութիւնների համար: կօնգրէսը ցաւ է յայտնում Բուլիզիի նախագծի համար, որովհետև նա հաստատում է սեփականատիրութեան վաւերացումն և ընտրողական սիստեմը ըստ դատարարների: Այս երկու սկզբունքները նախագծած ժողովին արգելում են իսկական թարգման հանդիսանալու ազգի գաղափարների և ցանկութիւնների, ուստ բազմատեսակ քաղաքացիների իրաւունքների բացառումն ևայլն: Ժողովը որոշում է պնդել անհատական և հասարակական ազատութեան երաշխաւորութեան բացակայութեան վրայ: Եւ տրանշում է նոյնպէս ոստիկանութեան և կառավարութեան չափազանց վերահսկողութեան դէմ: Այսպիսի մի գրութիւն անկարող է ապահովել ընտրած պատգամաւորների անկախութիւնը:

կօնգրէսը պնդում է Ժողովի վիճարանութիւնների հրատարակման վրայ: Բուլիզիի նախագիծը կայսրութեան մի խորհուրդ է դնում կայսեր և պատգամաւորների միջև, փոխանակ այն միութեան, որ յայտարարել էր ցարը իր ժողովրդի հետ՝ Ժողովի միջնորդութեամբ, և հետեւաբար, նա Ժողովը դնում է օտարադրեալի և կախում ունեցողի դերի մէջ: կօնգրէի անդամները ներկայացնում են բոլոր զլիւաւոր Զէմստիւօնները, նոյնպէս 50000ից աւելի բնակիչ ունեցող քաղաքները:

Խօսք է լինում նաև հրեաների ժողովում մասնակցելու մասին: կօնգրէսը այս առթիւ յայտնում է, որ ոչ մի չափաւորութիւն չէ ձանաչում:

20 Յուլիոյի

Որպէս երէկ, Զէմստիւօնների կօնգրէսը իր նիստը շարունակում է իշխան Գօլզօրուկովի տանը, բայց ոստիկանութիւնը չէ միջամտել: Առաջին սրտումն որ վիճարանութեան նիւթ եղաւ՝ բողոք էր անհատների իրաւունքների բռնաբարութեան և իշխանաւորների կամայա-

հանութիւնների դէմ: Տվերի պատգամաւորը նկատում է, որ բողոքը բաւականաչափ խիստ ձեռք չէ խմբագրւած, այնպէս որ կօնգրէսը յանձնարարում է դիւանին պատրաստելու մի երկրորդ խմբագրութիւն:

Իւրիճ ներկայացնում է սահմանադրութեան նախագիծ: Այս նախագիծը յարուցւում է քննադատութիւններ: Աւարկութիւնը պիտաւորապէս այն յարաբերութեան վրայ է, որ նկատելի է ներկայացուցչութեան մէջ: Այսպէս, զէմստիօններն աւելի քիչ աեղ են ուսանում քան թէ քաղաքապետութիւնները, վերին Ժողովում ոչ մի աեղ չէ աւած բազմաթիւ հեռաւոր քաղաքների, որոնք 100.000 բնակչից աւելի ունեն:

Ուրիշ առարկութիւններ են լինում կանանց ընտրական իրաւունքից զանց առնելու դէմ: Գիւանն առաջարկում է նախագիծն ընդունել սկզբունքով և յանձնել զէմստիօնների, քաղաքապետութիւնների և ընդհանրապէս քաղաքացիների քննութեան, որոնք կը յայտնեն իրենց կարծիքը: Այսպիսով սահմանադրութեան նախագիծը օգոտտօրին նորից կը քննուի կօնգրէտի կողմից: Կօնգրէտը ընդունում է առաջին ընթերցման միջոցին 220 ձայնով եօթի դէմ, նորից քննելու պիտաւորութեամբ:

Կօնգրէտը մերժում է մի այլ առաջարկութիւն, որի համեմատ, նախագիծը նորից քննութեան առնելուց յետոյ, զէմստիօնները աղերսագիր պէտք է կազմէին կայսրին ուղղած, նախագիծը բնորոշելու համար: Պ. Պետրունկեվիչը բուռն կերպով բողոքում է այս առաջարկութեան դէմ: Այսուհետեւ, առում է նա, ամեն յոյս կորած է: Ամեն ինչ ընթանում է հին ձևով: Գծուար է աեղ, թէ արդեօք զէմստիօնների անդամներին կը թողնեն աշխատելու յանուն ազգային շահերի կամ թէ օտարիկանութիւնը կընդհատէ նրանց պատրաստութիւնները: Պարզ է թէ, այն անջրպետը, որ բաժանում է կայսրին ժողովրդից, շատ մեծ է: Մենք յոյս սնէինք բարձրից գալիքը րէ ֆօրման երի վրայ: մենք կօչ արինք կայսր, այժմ մենք կօչ ենք անում ժողովրդին: Մենք յոյսնել, որ զրել էինք կառավարութեան քաղաքագիտական ըզգացման վրայ, սակայն կառավարութիւնը, իր գործերով, յեղափոխութեան ճանապարհն է ցօյց տալիս մեզ: Մենք պարտաւոր ենք կօչ անել ժողովրդին: Մենք այնքան աշխատել ենք և այնքան շարժարել, որ ժողովուրդը մեզ կը հաւատայ:

Իշխան Ռոսկոլսկին, ընդհատելով յայտնում է, թէ Պետրունկեվիչի ճառը մի ուղղակի ազդանշան է յեղափոխութեան, և թողնում է դահլիճ:

Իշխան Գօլցօրսկին հրաւիրում կօնգրէտին իշխան Ռոսկոլսկու բացատրութիւնը սխալ ճանաչել, որովհետեւ պ. Պետրունկեվիչ կրկնում է միայն այն, ինչ որ ազնուականութեան պարագլուխները մատնանիչ են տրել կայսր աւած իրենց յիշատակագրի մէջ և ինչ որ իշխ. Տրուբեցկօին գրել է ներքին գործօց մինիստրին: Պ. Պետրունկեվիչը միայն ցանկանում է խաղաղ միջոցներով արդիւել յեղափոխութիւնը:

Մի ուրիշ ճառախօս նկատել է տալիս, որ կայս-

րը, զէմստիօնների անդամներին արած իւր յայտարարութիւնից յետոյ չորս ուրիշ պատգամաւորութիւնների յայտարարութիւն է արել, բայց ամեն անգամ տարբեր իմաստով:

Մի նոր ճառախօս պահանջում է, որ բանւոր դասակարգերի ներկայացուցիչները և դիւզացիները հրաւիրեն համընթաց գործելու զէմստիօնների հետ:

Արշապէս կօնգրէտը մերժում է այն առաջարկը, որի համաձայն զրմստիօնների մշակած նախագիծը պէտք է ներկայացւեր կայսրն «բարեհայեցողութեան»:

Պ. Եակուսկինը պնդում է այն հանգամանքի վրայ, որ զեկա. 25 և մարտ 3 կայսերական հրովարտականքով խոտացւած ոչ մի ըկֆօրմ չէ իրականացւած, և յայտնում է այն կարծիքը, թէ ժողովրդի աեծ դանդաճը պէտք է մանակցէ քաղաքական աշխատութիւններին:

20 Յուլիս, Նիտա

Այսօրայ նիտաի ընթացքում մի պատգամաւոր առում է թէ, կօնգրէտի պարտականութիւնն է յեղափոխութիւն առաջ բերել խաղաղ միջոցներով: Շատ անգամներ երկիւղ են կրում, թէ մի գուցէ փորձեր լինեն ժողովրդին յեղափոխութեան մղելու, բայց, որպէս պ. Պետրունկեվիչը այսօր նկատել տւեց, յեղափոխութիւն իրապէս գոյութիւն սնի և զէմստիօնների ժողովը չէ կարող ոչ արգիւել և ոչ զեկավարել . . . նրա նպատակը պէտք է լինի շափաւորել կատարի գործողութիւնները և աւելի նւազ արիւնահեղ կացուցանել:

Այս այսպիսի խահեմութիւններով ու զգուշութիւններով զէմստիօնների պար ն ներկայացուցիչները կարող կը լինեն մրցել Տրէպօվի ու Նիկօլս Բ-ի արիւնաուշա կազակների և օտարիկանների հետ . . .

Ինչ էլ լինի, օոյն արած սրոշումների մէջ կօնգրէտն իրեն պարզապէս յայտարարում է կողմակից յեղափոխական քաղաքականութեան: Մի հետաքրքիր ընդդիմախօսութիւնից յետոյ, պատգամաւորները սրոշում են, որ եթէ պաշտօնեանների անարպար կարգադրութիւնները հրատարակեն՝ յենելով զրաւոր օգէնքների վրայ, Ռուսաստանի քաղաքացիները պարտաւոր են յանուն մարդկային ամենատարրական իրաւունքների, մերժել նրանց հնազանդելու:

Մի երկրորդ վճռով, կօնգրէտը սրոշում է ժողովրդին բաժանել նախկին կօնգրէտների ընդունած ծրագրեր:

Կօնգրէտը միանգամ ընդ միշտ յայտնում է իր համերաշխութիւնը ժողովրդի հետ:

22 Յուլիս

Այսօրայ նիտում հետեւեալ սրոշումները բնորոշուեցան: Կօչ անել մասնակցելու Զէմստիօնների և քաղաքապետութիւններին գալիք կօնգրէտին, որ կայանալու է օգոտտօրին Հելզինկֆօրսում և կամ Պետերբուրգում՝ այն նահանգների ներկայացուցիչներին, որ Զէմստիօնների

սիտեմը գեո չէ մտցրած որպէս նաև զանազան երկրագործական վարկի ընկերութիւնների պատգամաւորներին:

Յարաբերութեան մէջ մտել զանազան ընկերութիւնների, կազմակերպութիւնների և քաղաքական կուսակցութիւնների հետ:

Ա. Ելացնել բիրտոյի կազմը:

Ստեղծել մի քարտուղարութիւն:

Կոչ անել գեղացիներին, մասնակցելու Կոնգրեսին, որպէս նաև բանասերներին:

Ինչ որ էլ որոշեն, մի հօր և կարող ձեռք պակասում է, ինչ որ չէ՝ բակից օտերների մէջ, որոնք դժբախտաբար զէպի մահ և խորխորատ են տանում Ռուսաստանը: Փոխանակ գործելու խառն են, փոխանակ ուղղակի ազդային օրէնդիրքով զուժարելու և առանց յապաղման սահմանադրութիւն հրատարակելու, ձգձգում և դանդաղեցնում են, մինչև որ 'գայլ, միապետութիւնը, 'աղւտի' քարք հագած, իր օրոգայթների մէջ կը ձգէ խօսնչ սիրող զէմտաժօններին և շատ դժուար կը լինի ուղղել գործած յիշար: Ահա թէ որտեղ պէտք է օչնութեան հասնէ դարձեալ և դարձեալ պրօլետարիատը, որի ձեռքերով միշտ և ամենուրեք շագանակներ է հանել կրակից բուրժուա և "ագնաշոք" դասակարգը: Մինչև որ հրանօթ չվերցնէ ճնշած և շահագործւած տարրը անարգ բռնապետութեան դէմ, անկարելի կը լինի ճառերի ճոճորցներով սահմանադրութիւն դուրս կորզել աւազակների վահմակից: Յեղափոխութեան ներական ուժերը և ընդհանուր գինեալ բռնկումն միայն կը տապալէ բռնապետութիւնը, հաստատելով Ռուսիական հանրապետութիւն

S.

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ը Ո Ի Բ Զ Ը

ԵԵՄԵՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Արաբների ապստամբութիւնը հետզհետէ լայն և սպառնական ծառայ է ստանում, չնայած Ելլըզը Գիօշկի հաւաստիացումներին: Կարծէք մի առանձին զուգահիպութեամբ երկու արիւննուշտ բռնապետութիւնների բախտը նոյն օրհասական վախճանին է յանգում: Այնտեղ ցարիզմն է անկման մօտենում՝ յեղափոխական ամեն տեսակ տարրերի և խմբերի անշեղ հարւածներից, այստեղ Սուլթան Աբդուլ Համիդի առանց այն էլ խախտած գահն է երերում՝ արաբական յասուլուն ապստամբութեան շնորհով, որ ահա ամիսներ շարունակ Համիդի հանգիստ քունը և խաղաղութիւնը վրդովել է: Այդ բաւական չէ: Ռուսաստանի ուժերի պայթիւններն էլ իրենց գեղեցիկ և զօրեղ արձագանգներն են գտել մեծ աւազակապետի մայրաքաղաք Կ. Պոլսում. . . Բայց մի դարձանակ գիպւածով դարձեալ մազապուրծ եղաւ Մեծ Մարդաս-

պանը յեղափոխականի ներական ուժերի հարւածից, առիթ տալով եւրօպական անարգ միապետներին ու երկրի բախտն իրենց ձեռքում խաղաղիկ գարձած մեծերին շնորհաւորական մեծամեծիւն հեռագիրներ ուղարկելու և մաղթանքներ կարգալու Մեծ ՌՃրագործի արեւշատութեան համար . . .

Անցնելը, սակայն, Եէմէնի ապստամբութեան Արդէն տեսանք, որ Մահմուտ Եահեան իրեն խալիֆա է հռչակել: Այժմ էլ եւրօպական թերթերին հեռագրում են Բէյրութից, թէ Եգիպտոսի մեծ մուֆտին մի ծանր և վտանգաւոր որոշում է կայացրել: Նա, Մահմուդ Աբդուլ, մի հոգեւոր պետ է, ուղղակի Սուլթանից կախումն ունեցող և որը ահագին հեղինակութիւն ունի Աֆրիկայում: Նա վերջնականապէս արաբների կողմն անցնելով, մի բանադրական շրջաբերական է հրատարակել որով զրկւած է յայտարարում թիւրքերին խալիֆայութիւնից: Եթէ այս լուրը ճշուէ, ահագին և անմիջական հետևանքներ կունենայ ապստամբութեան համար: Ապստամբներն արդէն մօտ երկու երեք շաբաթ է գրաւել են Մոկա, Բէլաէզ-Ֆարի, Աբու-Արիշ և Կոնֆոնդա քաղաքները: Թիւրքերն այժմ ամբողջ Եէմէնում միմիայն Հօդէյդահի նաւահանգիստն ունեն ձեռքերին: Սուլթանը որոշած է եղել 16 յիճանաւեր սղարկել յիշեալ նաւահանգիստը պաշարումից զերծ պահպանելու համար, սակայն իր գաղափարակից Նիկոլա Բ. ի "Պատեօմկիւն" նաւի ապստամբութեան արկածը անմիջապէս արգելք է հանդիսացել այս գեղեցիկ ծրագրին:

Այս ամենից յետոյ ապստամբների հետ բանակցութեան գիմեց Համիդը, առանձին պատգամաւորներով միջոցով, որո՞ք կամեցան նենգութեամբ կաշառել ապստամբութեան զեկավարներից մի քանիսին և չարաչար կերպով պատժեցան: Մահմուդ Եահեան նըրանց կալանաւորեց, մագերը, մօրուք, բեխերն ածիլեց և յետ ուղարկեց Հօդէյդահի: Այս անյաջողութիւնից յետոյ թիւրք կառավարութիւնը մի ընդհանուր արշաւանք է ծրագրել Հօդէյդահից էլ այն կողմը, միաժամանակ Սանաաի դէմ: Քսան և Տինգ գումարտակ են սպասում: Փոխադրուլ նաւերը թնդանութներ և ուղղամթերք են փոխադրում մեծ քանակութեամբ ապստամբների համար: Գնեերալ Ֆէյզի փաշան արշաւում է Մենաքայի վրայ: Լուր է տարածել, թէ իբր թէ ապստամբները մի տեղ պարտուել են և տաճիկները պարագլուխներից մէկի եղբօրը գերի են վերցրել: Ընդհանուր ապստամբութեան երկիւղ կայ: Սակայն Ֆէյզի փաշան կատարելապէս անյաջողութեան է հանդիպում իր արշաւանքի մէջ դէպի Սանաա Հօդէյդահով և Թաէզով: Ճոնապարհը դէպի Սանաա՝ ամբողջովն բռնւած է ապստամբներով: Այս վայրն առնելու համար, Արէնի կողմից պարտաւոր են ցամաք իջնել, որ ահագին դժարութիւնների հետ է կապւած: Միւս կողմից հէնց ինքն Հօդէյդահում յաճախ խոռովութիւններ և խլրտումներ են

տեղի ունենում թիւրք զօրքի մէջ: Չինուորներն անպատիժ կերպով կողոպտում են խանութները: Բէյրութից էլ հեռագրում են, որ Գեներալ Ռամզի-փաշան կալանաւորել է արաբական ապստամբներն առանձին համակրանք տածելու պատճառով: Ուրիշ նշանաւոր ձերբակալութիւններ են տեղի ունեցել Տըրիպօլիս և Համա: Թիւրքերի դէմ հետզհետէ աճում է ատելութիւնը և խորին դժգոհութիւնը . . . Բաւականին զուգահեռութիւններ են նկատուում Ռուսաստանի ներկայ դրութեան հետ. տեսնենք ինչ՞ պիտի յանգի այս բոլորը . . .

S

Վ Ե Ր Չ Կ Ե Լ ՈՒ Ր Ե Ր

Havash գործակալութիւնն երօպական թերթերին հաղորդում է հետևեալը: Յուլիս 21ին Սևամլըքի ծիսակատարութեան ժամանակ Մէջիդի գաւթում մի ուսուցիչ պայթեց, բոլորովին ձու Սուլթանին, որը անվնաս մնաց, սակայն իր հետևորդներից շատ շատերը, բոս վրէժին անդեկութիւնների, թեով ժող 70, վիրաւորեցին և լապանեցին: Բազմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցան: Յարդ չէ պարզել, թէ ո՞վ է փրձի հեղինակը. կարծում են թէ բուլղարական, հայկական կամ այլ յեղափոխականների գործ է:

Մայիս 23ին, բոլորովին անպատիժ կերպով, Ֆինլանդական ջրերում մի տեսակցութիւն տեղի ունեցաւ Յարի և Վիլհէլմ կայսրի միջև: Այս տեսակցութեանը, սրը իբրև թէ քաղաքական բնաւորութիւն չէ կրում, երօպական բոլոր թերթերը ահագին էջեր են նւիրում, ընթերցողներին զբաղեցնելու լաւ նիւթ գտնելով: Ոմանք կապում են Մարօքիոյի, ոմանք ուսուստանական պատերազմի, Ռուսաստանի ներքին անարխիական դրութեան հետ. իսկ վերջերս էլ, որպէս յայտնում են Daily Mail և այլ թերթերին, Վիլհէլմ կայսրը նպատակ ունի իր որդիներից մէկին բազմեցնել Նորվեգիոյ գահի վրայ, որի համար էլ կամենում է ցարի հաւանութիւնն ստանալ: Յամենայն զէպօ, Օգոստոսիստ Ալիբիազէսը ամեն անգամ մի առիթ է գտնում շփոթ ու զղրդեան յարօցանելու դիւանադիւանական շրջաններում՝ իր յանկարծական յաւերժական ճանապարհորդութիւններով և ճառարանութիւններով:

Պետերբուրգից Յուլիս 20ին Echo de Paris յատուկ թղթակիցը յայտնում է, որ այժմ բոլորովին հաւաստի է թէ «Պատեօմկին» ապստամբութիւնը կապ ունի մի նաւային խոշոր զաւազրութեան հետ, որ միաժամանակ պէտք է պայթէր զինուորական զանազան նաւահանդիստներում և որը «Պատեօմկին» նաւապետի շնորհով կանխօրօք բռնկեց Օլեոսայի առաջ: Արդէն երկու օրէ ինչ սը մի ահա՛նաւ ապստամբել է Արօնշտատում և շրջապատած է: Այսօր վերջին օրն

է նրան տրւած անձնատուր լինելու համար, հակառակ պարագային խիտ և եռանդուն միջոցներ ձեռք կառնեն:

Ռուս կառավարութիւնը իր անկումը գուշակելով, սկսե է խուլիդաններին զինել յեղափոխականների դէմ: Մօտ օրերս Նիժնի-Նովորոզում հակայեղափոխական ցոյցեր են տեղի ունեցել, որի ժամանակ վիրաւորել և սպանել են բազմաթիւ ինտելիկէտներ:

Վարչաւայից հաղորդում են, որ Ղեհական ժողովրդից ժող երեք հարիւր լիւսուոր ներկայացուցիչներ, որոնց թիւում բաղաթիւ իշխաններ ու կոմսեր և հոչակաւոր վիպասան Սենկեվիչ մի յիշատակագիր են ուղղել մինիստրների խորհրդին, թւելով ուսացման հըրէշաւոր քաղաքականութեան տխուր հետևանքները, ամբողջ 40 տարւայ ընթացքում, որը գործադրում էր Ղեհաստանում: Այս քաղաքականութիւնն է, որ ընդհանուր դժգոհութիւն և կրքերի բորբոքում է առաջ բերել Ղեհաստանում, գիւղացիների մէջ, որոնք երկիւղ են կրում իրենց գոյութեան համար և այս բոլորի հետևանքն է դպրոցների փակուումը, անկարգութիւններ և գործադուլներ: Բողոքարկուները չեն կարծում, թէ Ռուսաստանի շահը պահաջելիս լինի մի այնպիսի ռէժիմ՝ շարունակել, որը իւր նպատակին չհասնելով, հակառակ և ողբալի հետևանքներ է առաջ բերում, որոնցից միմիայն Ղեհերը չեն վնասուում:

Echo de Paris ի հեռագրում են, թէ մեծ Շէրիֆ Ասուն Էրրաֆինի մահը ահագին յուզում առաջ բերեց: Բոլորը կարծում են թէ այս նշանաւոր անձնաւորութիւնը թուեաւորած է բարձրից եկած կարգադրութեամբ: Յայտնի է որ Բ. Գուռը ցանկանում էր այս բռնը «բառնալ ի միջոյ», որ ձանձարի էր դարձել իւր համար ներկայ պարագաներում: Նոյն թերթին հաղորդում են նաև Եգիպտոսի մեծ Մուֆթիի մահը, որ մի քանի օր միայն եկել էր Ալեքսանդրիա: Թաղոււմ տեղի ունեցաւ մեծ շքեղութեամբ գահաժողով: 1882 թւին մի բանագորական շրջաբերական էր հրատարակել խեղդի դէմ: Այս մահն էլ կապ ունի Մուֆթիի այն բանագրման հետ, որ հրատարակեց Սուլթանի դէմ:

Daily Telegraph ին Վիեննայից հաղորդում են թէ Սուլթանը ձեւրակալել է տեւ իր եղբորը, մերձաւորագոյն թագաժառանգին, Չրաղանի պալատում: Սուլթանը պալատական ենթադրեալ յեղափոխութիւն է գուշակում, որին խառն է իբրև թէ իր եղբայրը՝ Ֆէհմի փաշան — գաղտնի ոստիկանութեան պետը, Ասիա է արքուրել: Նոյն տեղից հաղորդում են, թէ Սուլթանը մի բողբագիր է ուղղել եւրօպական պետութիւններին, որի մէջ գանգատում է բուլղարիոյ դէմ, ուր ուսուցիչ են պատրաստում և ճաճկաստան փոխադրում: Բուլղարական կառավարութիւնը յետ է մղել այս ամբաստանութիւնները խորին գայրոյթով իբրև բոլորովին մտացածին և միաժամանակ մի յիշատակագիր ուղղել թիւրքիային, ռէֆորմները իրագործելու նկատմամբ:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԵՐԵՆՆԵՐ Մ-դի գանձարանում ստացել են.

(Հարթ թ 6) Հաւարչան խ. Գեկտ. Աղբիւր, Արծիւ, Գանակ 1-ին Բ, Անտոն. Սարէն, Գեաակ, Բագրատ, Խորէն, Կայծակ, Սմբատ, Արծրունի, Լիւիկ, Թրթուր, Աբել 50-ին Կ. Պատանեաց խ. ամսվճ. Սարդ, Արծաթ, փռոտ, Կայծակ, Վարդա՛ 5-ին Բ, Խաչ 1, Հապաչ 1, Մատանի 3, նւր Խաչ 2, Արծանակ 2. Փայլուն խ. 3 ամսվճ Հոկտ. Նոյ. և Գեկտ. Ծաղիկ 5, Գանակ 6, Սար 9, Ոսկի 3, Ճիւղ նւէր 10. Կանանչ քաղաքի Վեհ խմբից Օշոս.— Յունւար Բ Աղբիւր, Խորէն, Մար. տիկ, Վարդ, Փիլիպպոս, Սամսոն 1. 25-ին, Եղիա 2, Աբրեւ, Վաղարշակ, Կիրք 1. 25 կն, Իշխան 5, Կրկին 7, Կիրք 1. 15. Նոր Ծաղիկայ խ. Այր, Բէն, Տէր-տէր, Մէն, Վարդան, Չաքոյ, Գրիչ, Ռուբէն, Հարիւ-րապետ, Տիգրան, Տրդատ, Գէմար 1. 25-ին. Երիտա-սարդ խ. Արաւազ, Տիւն, Սուրէն. Թոյ, Կէն, Հնորհք, Հաւարչան, Արագած 1-ին Բ. Պայծառ խ. Արտաշէս, Կրակ, Մանասէ, Կիպրիկ, Լիւիկ, Գեղակ, Ռաֆայէլ 1. 71 կն. Երչանիկ խ. Գնդակ 55 կ, քնար 30 կ, Ար-տաւազ, Թոն, Սուրէն, Հնչել 25 կն կ, Հասարակ 50 կոպ, Աղաեաք 55 կ, Անգած 50 կ, Պինդ 60 կ, Հա-մարձակ, Պատի, Ազնիւ, Երիտասարդ 1-ին Բ, Կեցցէ և Մսիսէս 50 կն կ. Շղթայակապ քաղաքից Գեկա. ամսվճ. Երկաթ, Արշալոյս, Համիլ, Տէմար, Մառիտ, Ա-րապո, Խոչո, Ալմաս, Կիզակ, Թոգուհի 50-կն կոպ, նոյն խմբից նւէր 1. 25.

ՍԵՆՍԵՆՆԱՎԵՆ Մ-դի գանձարանում ստացել են 1903 թ. Մարտ 15 — 1905 թ. Մարտ 14.—

Անդամավճ.— Բազար 268 Բ 60 կ, Մեղու խմբ. 73 Բ 55 կ, Եղիւմ 72 Բ 60 կ, Զորեղ 21 Բ 70 կ, Արծազանդ 19 Բ 55 կ, Թոռուցիկ 20 Բ 95 կ, Արօր 31 Բ 13 կ, Հողագործ 10 Բ 80 կ, Մլար 9 Բ 50 կ, Մը-շեցու 13 Բ 75 կ, Երեկոյթներից 100 Բ 71 կ, Բարենկնդան 54 Բ 60 կ, Աւետիսից ծննդան ամթիւ 90 Բ 20 կ, Թատրոնից գուտ ար-դիւնք 28 Բ 40 կ, Տուգանքներ 16 Բ, Մատաղից 4 Բ 70 կ, Հարսա-տիրներում, ճրակներում եւայլն 121 Բ 56 կ, Նւէրներ 69 Բ 68 կ, Եղեսիայի շրջանի գիւղերից— Լեոնադաշտ 190 Բ 25 կ, Բա-բելոն 169 Բ 35 կ, Ճառագայթ 63 Բ 50 կ, Պայծառ-Ատոյ 114 Բ 70 կ, Զարար 21 Բ, Նւէրներ 32 Բ, Արմուր 72 Բ, (Նւէր Դաշ-նակցականներից) Զար 17 Բ 15 կ. (Նոյն) Հնդ. գմբ. 1707 Բ 93 կ.

ՎՕՆՍԵՆՆԵՆՆԵՆ Մ-դի գանձարանում ստաց-ւել են.—

Ա, Վաղարշ, Զ. Գ., Առակ, Մ. Բագրատ, Անակ, Թ. Գ. Կամբէտ, Հայկազն, Շաւարշ, Ե. Կ. Հայկ, Ռաքէ, Արապո, Ճոգէ, Գնդակ, Թոռուն, Տոմատ, Խոնու, Ռոման, Ե. Խ. Տ. Մամ-զէր, Աշոտ, Փ. Սէյտր, Գիւցազն, Հետում, Նպատ, Վաչէ, Մո-վար, Զարէ, Կամար, Աւէտ, Տարղաշ, Ատաւատ, Գ. Կլակ, Երկան, Սէմ Պոպուտ, Սիւն, Զամ, Տ. Մ. Նորիատ, Տոլակ, Գորգէն, Մոմակ, Արամ Արամից, Աբեղ, Պերճ, Խ. Մ. Ար-շաւ, Կ. Կ. Մ. Փոն, Աշան, Կ. Դ. Ա. Բ. Ն. Գ. Թ. Ս. Օճ. Տա-րոն, Հրացան, Վրամշապուհ, Արմէն, Մէհան, Արագ, Խոնարար, Լեւոն, Սմբատ, Կիւրգան, Մատաթիայ, Հովսէպ, Աթէնք, Ար, տաշիր, Արշաւիր, Սվոն, Առիւծ, Շաւարշ, Լեւոն, Ռուբէն, 2-ական Ֆրանկ: Գմբ. 156 ֆ.

ԲՈՒՐԳՆԱՅԻ Մ-դի գանձարանում ստացել են 1904 թ. փետրար 1 — 1905 թ.— Յունւար 1

Պ. Մուրատի միջ. կայարաններից հանդ. 118 ֆ. Մատուն՝ խ. 6 ֆ, Վաստրուրական՝ 10 ֆ, Վայաստան՝ 1 ֆ, Վարչու-թեան անդամներէ 14 ֆ, Մատուն՝ 6 ֆ, Վաստրուրական՝ 6 ֆ, Վայաստան՝ 1, Վարչ. 10 ֆ, Այտոսի Նախորդ հանդ. 18 ֆ, Վայաստան՝ 3 ֆ, Խումբերէ գանձուած այլ եւ այլ անաններ 201 ֆ.

ՀՈԳՆԵՆՆԵՆ Մ-դի գանձարանում ստացել են.—

Եր. Օղ. (Ֆէդորով) 1000 Բ: Մեղու՝ խ. մինչեւ Յունվ. 1 ամսվճ. 92 Բ 50 կ, Առիւծ՝ 18 Բ, Օժանդակ՝ նւէր 18 Բ, Ռոտուն՝ մինչեւ Մարտ 1 ամսվճ. 17 Բ 50 կ, Վեգէն՝ Մարտ 1 46 Բ 70 կ, Ազգասէր ոմս 10 Բ, Կարկուտ՝ մինչեւ Յունվ. 1 15 Բ, Փեթակ՝ 18 Բ 50 կ. Գմբ. 1236 Բ, 20 կ.

ԲՆՆԵՆՆԵՆ Մ-դի գանձարանում ստացել են.—

1903 թ. Մայիս 1 — Դեկտ. 31
Կանխիկ դրամ 779 Բ 74 կ, Խմբերից՝ Յիշատակ՝ 15 Բ 35
Պայթուցիկ՝ 11 Բ 80 կ, Յիշատակ՝ 12 Բ 35 կ, Կիւրիկա՝ 4 Բ.
50 կ, Մատոյ—Արուսեակ՝ 9 Բ, Մատուտակ՝ 17 Բ, Մաշտուտ
30 Բ, Օղակ՝ 4 Բ 10 կ, Մասիս՝ 26 Բ, Մատուտակ՝ 11 Բ 50 կ
Վրէժ՝ 12 Բ, Մատուն՝ 11 Բ, Ազատիչ՝ 15 Բ, Արուսեակ Գրն-
թունու, Համբի եւ Ռոտունի երեկոյթից 44 Բ 30 կ, Տիրայր՝
12 Բ, Տոմար՝ 15 Բ 07 կ, Լեւոնի երեկոյթից 35 Բ, Տրասխանոր՝
Մ-դից 15 Բ, Արագած Մ-դից 15 Բ, Բագրատունի, Համբ, Սեւան եւ Մամի-
կոն 30 Բ Մասիս՝ 40 Բ, Պայթուցիկ՝ 8 Բ 60 կ, Բազէից մի հանդ.
թերթով ակտիքի ամթիւ 11 Բ, Մատուտակ՝ 10 Բ, Ղոռ՝ 9 Բ 10
Նիւրանի միջ. հնդ. 39 Բ. գմբ. 1243 Բ, 51 կ.

1904 թ. Յունւար 1 — Յունիս 1
Կանխիկ դրամ 248 Բ 91 կ, ծննդան ամթիւ քաղ թողած
հանդ. թերթով Նո. 1 Սեւան, Ռոտուն՝ 96 Բ 24 կ, Նո. 3 Տե-
նանդ՝ խ. միջ. 19 Բ 27 նւէր Գ. Յակոբեանից Սեւանի միջ
1 Բ 50 կ, ծննդան ամթ. քաղ թողած հնդ. թերթ. Նո. 5 53 Բ
05 կ, Կարմիր Դրոշակ՝ խ. երեկոյթից 85 Բ 16 կ, Մատոյ—Ա-
րուսեակ՝ 6 Բ 30 կ, Հայրենից՝ 7 Բ 50 կ, Տոմար՝ 12 Բ 25 կ.
Մատոյ—Արուսեակ՝ 6 Բ, Վրէժ՝ 9 Բ 80 կ, Վրէժ՝ 9 Բ 30 կ, Ե-
նանդ՝ 14 Բ 45 կ, Հայրենից՝ 9 Բ 70 կ, Մուշեղ Մամիկոնեան
4 Բ, Արագ՝ 4 Բ 60 կ, Վրէժ՝ 16 Բ, Տոմար՝ 14 Բ. Տոմար՝
8 Բ 80 կ, Մաշտուտնք՝ 6 Բ 86 կ, Մատուտակ՝ 4 Բ 60 կ, Նոր-
ծաղիկ՝ 9 Բ, Մատուտակ՝ 4 Բ 30 կ, Մատոյ Արուսեակ՝ 5 Բ 50
Մատուն՝ 12 Բ 50 կ, Մատուն՝ նւէր 11 Բ 20 կ. գ. 680 Բ 73 կ.

ՄԵՐԵՆՆԵՆ Մ-դի գանձարանում ստացել են.

Հիստեանք 40 դրամ, Կոս. Սարգսեան 60, Մասեհ 40, Ռոտունեան 60, Մարգ 25, Ա. Միս. 6, Ս. Ս. 12, Խոնդեան 6, Յ. Յովս. վիճի. 14, Ե. Պահլաւ 4, Ս. Կ. Դ. Խոնք. 10, Պահ-լաւ 6, Բ. Ե. Վ. 8, Վ. Վրէժունի 12, Հայկազն 30, Ս. Պ. Գե-
նանդանի գին 3, Եղբ. Վ. Բէ. 8, Նոյնից գինանշանի գին 8, Խոնքեղ 12, Բ. Նազ. 12, Պահլաւ 6, Ս. Կ 6, Ա. Շահնազան 12, Ա. Միս. 6, Բէգ. Նազ. 12, Վինա 24, Ե. Պահլաւ 12, Եղբ. Բէգեաններ 12, Կոստ. Բէգ. 100, Պրոպ 12, Վահագն 30, Գոգոլ 10, Ժայռ 10, Վինա 10, Պրոպ 3, Վահագն 10, Լալագար 80, Պրոպ 20 դր. Վաղարշ Զարարեան 20 դր. Բէգեան 60, Ոմս 10, Ս. Կամարական ամսվճ. 1 դր., Ս. Ս. 1, Ե. Պահլաւ 2, Զալուրի եւ Տաշրունի 4, Խոնքեղ 2, Ներկայացումից նւէր Ս. Կամ. միջ. 30, Ս. Ս. 2, Հ. Կ. 2000, Փուշ 500, Մուկեթ 40, Գ. Պ. 30, Գրադարանում հնդ. 6, Գ. 12, Ս. Կամարական 5, Ա. Վ. նւէր 350, Շահնազ 100, Յ. Բ. 80, Հանան Շահ 230, Ոմս 150, Յ. Յ. 100, Ս. Բ. 30, Ոմս 20, Ե. Տաշրունի 10, Յ. Բ. նւէր 150 դր., Ս. Ռ. նւէր 60, Ա. Մ. 6, Ս. Ս. 9, Գ. Բ. Գ. Կամ. նւէր 20, Ա. Խ. նւէր 60 Բ, Արհեստաւոր 120, Կ. Ս. նւէր 60, Միս 40, Ս. Ս. նւէր 25, Յ. Յ. վիճակաւոր. տոմսերից 14 Բ, Ե. Պահլաւ 4 դր.

Վ Ր Ի Պ Ա Կ

ՀնՉԱԿ թիւ 3 Մարաղայի Մ-դի գանձարանում ստաց-ւած ցուցակի մէջ պէտք է լինեն հետեւեալ փոփոխութիւն-ները.— Մարաղայի Մ-դի գանձարանին են վերաբերում Զար Բիզակեանի եւ Սովորուրայի հանգանակութիւնները (քացի Ալլահ վերդեանի եւ Սալաւեանների նւէրներից): Միւս ներառուութիւն-ները ստացւած են Թաւրիզի Կենտրոնական Մ-դի գանձարանում: Հանգանակութեան առաջին մասի 640 դր. հանգանակուած է Փարսատի ձեռամբ:

Գրամ, ժանդատ և այլն ուղարկել հետեւեալ հասցեով.—

M BELLART, Poste-Restante Bureau No. 52 (France) PARIS.

Imprimeur-Gérant Gabriel FARJAT. 7, Rue Campagne Première, PARIS Imprimerie Spéciale du « HENTCHAK »